

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 16-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ա. ԽԱՎԻՆ

ՀՆԳԱՄՅԱԿԻ 3-ՐԴ ՏԱՐՎԱ
ՇԵՄՔԻՆ

ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԽԾՀԱՐ ԺՈՂՈՎՌՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉ.՝
ՄՈՍԿՎԱ. 1930

338-98
Խ-33

17 FEB 2010

338.98

Ա. Խ. Ա. Վ. Ի. Ե.

Խ - 33

ԱՐ

ՀՆԳԱՄՅԱԿԻ Յ-ՐԴ ՏԱՐՎԱ Ը Ե Մ Ք Ի Ն

ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ՇՐՋԱՆԸ

Հաղիկ միայն լռել եյին քաղաքացիական պատերազմի վորոտները, յերբ պրոլետարիատը ամբող յեռանդով սկսեց վերականգնել իր արդյունաբերությունը, ֆաքրիկների, գործարանների և հանքերի խոշորագույն մասը անգործնեյության եր դատապարտված։ Աշխատող գործարաններից շատ քչերն եյին ծանրաբեռնված աշխատանքով և այն ել՝ 15—20 տոկոսով։

1921—22 թվից խորհրդային արդյունաբերության պատմության մեջ սկսվում է վերականգնողական ժամանակաշրջանը։ Կանգ առած ֆաքրիկներն ու գործարանները գործի յեն կոչվում, հեղեղված հանքահորերը մաքրվում են ջրից և տրվում են շահագործման։ Բանվորները կովի ճակատից լրենց գործարաններն են վերադառնում։ Հետզհետե քաղաք են գալիս և այն բանվորները, վորոնք առաջ, քաղցից ու ցրտից հարկադրված, գյուղերն եյին գնացեր, Արդեն 1922—23 թվից արտադրությունն սկսում է արագորեն աճել։ 1926—27 թվին վոչ միայն հասել եյինք մինչպատերազմյան մակարդակին, այլ և արտադրության այդ մակարդակը մեր յետեն եյինք թողել։ Յեթե 1920 թվին մեր արդյունաբերությունը տալիս եր մինչպատերազմյան պրոդուկցիայի 15—20 տոկոսից վոչ ավել, ապա նա 1926—27 թվին տվել ե 7 տոկոսով ավելի, քան մինչ պատե-

ըաղմն եր տալիս: Հինդ-վեց տարվա հերոսական աշխատանք եր պետք պրոլետարիատին, վորպեսզի նա կարողանար վերականգնել իր տնտեսությունը, բժշկվելով իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հասցրած վերերից:

1922—26 թվականների ժամանակամիջոցում մեր արդյունաբերությունը զարգանում եր այնպիսի հսկայական տեմպով, վոր վոչ մի յերկում տեսնված չելին: Բավական ե միայն, իբրև որինակ, ցույց տալ, վոր Խորհրդային Միության պետական խոշոր արդյունաբերությունը 1926—27 թվին 5,2 անգամ ավելի պրոդուկցիա յե տվել քան 1921—22 թվին. (1921—22 թվին խորհրդային արդյունաբերությունը բաց ե թողել 850 միլիոն մինչպատերազմյան ռուբլու պրոդուկցիա, իսկ 1926—27 թվին 4 միլիարդ 400 միլիոն ռուբլու): Իսկապես վոր, կարելի յե զարմանալ: Արտադրության այդ չտեսնված մեծացումը տեղի յե ունեցել շնորհիվ այն հանդամանքի, վոր ամսե-ամիս կրամտվել ե մեր չափատող ձեռնարկությունների թիվը, վոր ամսե-ամիս ավելի և ավելի յե աճել մեր աշխատող ֆաբրիկների և գործարանների քանակը: Արդյունաբերության վերականգնման հետ միաժամանակ տեղի յե ունեցել նաև արդյունաբերական պրոլետարիատի հավաքման պրոցեսը: Տարեց-տարի աճել ե աշխատող բանվորների թիվը և 1926—27 թվին արդյունաբերության մեջ արդեն աշխատում եր 2 միլիոն բանվոր, մինչ գեռ 1921—22 թվին աշխատող բանվորների թիվը 998 հազարի յեր հավասար:

Այսպիսով խորհրդային յերկը պրոլետարիատը մինչև 1926—27 թվականը վերականգնել ե իր արդյունաբերությունը: 1921—26 տարիներում, յերբ արտադրության ծավալումը տեղի յեր ունենում բացառապես հին ձեռնար-

կությունների վերականգնման հաշվին — այդ շրջանը հայտնի յե «վերականգնողական» անունով: Այդ տարիներում նոր շինարարություն գրեթե չի յեղել, նոր շինարարությունը կենսագործվում եր միայն իբրև չափազանց հազարայից բացառություն: Այսպես որինակ՝ այդ ժամանակամիջոցում կառուցվել ե Վոլխովյան ելեկտրոկայանը:

Հենց միենույն այն գումարները, վորոնք մտցված են արդյունաբերության մեջ, ծախսվել են զլսավորապես գործող ֆաբրիկների վերանորոգման և չգործող ֆաբրիկների վերականգնման ծախսերը հոգալու համար:

«Վերանորոգել և ճերմակացրել ենք», — ահա թե ինչպես կարելի յե բնութագրել այդ վոչ այնքան մեծ առաջնակարգ աշխատանքները, վոր կատարվել են այդ ժամանակամիջոցում: 1926—27 թվականից, խորհրդային արդյունաբերության պատմության մեջ սկսվում ե նոր ժամանակաշրջան — ոեկոնստրուկցիայի ժամանակաշրջանը: Այս շրջանում արդյունաբերության դարգացումն արդեն տեղի յե ունենում զլսավորապես նոր ձեռնարկություններ կառուցելու և հների վերակառուցման (ոեկոնստրուկցիա) հաշվին:

Ոեկոնստրուկցիոն շրջանի հենց նախորյակին (1925 թ. դեկտեմբերին) գումարված՝ կուսակցության տասնչորսերորդ համագումարը մի շարք ծրագրային դրույթներ ե տվել, վորոնք վերակառուցման շրջանի արդյունաբերության ամբողջ աշխատանքի հիմքը պիտի դառնային: Տասնորրդ համագումարը, — վոր արդարացիորեն կուսակցության պատմության մեջ մտել ե իբրև ինդուստրիալիզացիայի համագումար, — կենտրոնական կոմիտեյին դիրեկտիվ ե տվել. «ապահովել ԽՍՀ Միության տնտեսական ինքնուրույնությունը, ինչ հեռու կպահե նրան կա-

պիտալիստական համաշխարհային տնտեսության կցորդը դառնալուց. հենց դրա համար ել կուրս վերցնել յերկրի ինդուստրիալիզացիայի, արտադրության միջոցներ արտադրելը զարգացնելու և տնտեսական մանյովրներ կատարելու համար ռեզերվներ ստեղծելու վրա»:

ԽՍՀ Միությունը պիտի կապիտալիստական տնտեսությունից տնտեսապես անկախ դառնա: ԽՍՀ Միությունը զարգացման այնպիսի տեմպեր պիտի վերցնե՝ վորպեսզի իր յետևը թողնե կապիտալիստական աշխարհին:

Տառչորսերորդ համագումարը այդ նշանաբաններն առաջարկել ե յերկրի հենց վերակառուցման շրջանը թեվակոխելու նախորյակին, հենց այն ժամանակ, յերբ նախկին ամբողջ հիմնական կապիտալը զբաղեցրված եր բոլորովին և յերբ շատերին թվում եր, թե աճման տեմպերն անխուսափելիորեն պիտի ընկնեն: ԽՍՀ Միության Գերագույն ժողովնախորհին կից այդ ժամանակ ստեղծված «Հիմնական կապիտալի վերականգնման հատուկ խորհրդակցությունը» զարգացման այնպիսի տեմպեր եր ընդգծել, վորոնք ըստ արժանվույն հանգչող ծուռ գծի անունն ելին վաստակել: Ըստ այդ տեմպերի՝ 1925—26 թվին արտադրությունը նախկին տարվա համեմատությամբ պիտի աճեր միայն 31,6 տոկոսով, 1927—28 թվին՝ 22,9 տոկոսով, 1928—29 թվին՝ 15,5, իսկ 1929—30 թվին՝ 15 տոկոսով:

Այսպիսով յենթադրվում եր, վոր տարեց-տարի արտադրության տեմպերը պիտի ընկնելին:

Ընկեր Ստալինը տասնվեցերորդ համագումարում հիշեցրեց, վոր Տրոցկին «Դեպի սոցիալիզմ, թե զեպի կապիտալիզմ» իր գրքույկում հանգչող ծուռ գծի թեորիան ե պաշտպանել: Տրոցկին այդ գրքույկում ցույց ե տվել, վոր

«մեր ժամանակներում ընդարձակումը կայանում ե անհամեմատ մեծ չափերով հին գործարաններն ոգտագործելու և հին սարքավորումները գործադրելու մեջ», և դրա համար ել իբր թե «վերականգնողական ժամանակաշրջանն ավարտելուց աճման կոեֆֆիցիենտը պիտի զգալիորեն փոքրանա»: Այդ «մարզարեացումները»՝ նույնիսկ նվազագույն չափերով՝ չեն արդարացել:

Կուսակցության տասնհինգերորդ համագումարում (1928 թվին) ընկ. Ստալինը մատնանշել ե, վոր «սոցիալիստական արդյունաբերությունը զարգանում ե և վոչ մի յերկրում չտեսնված տեմպերով»:

«Յերկիրը ինդուստրիալիզացիայի յենթարկելու քաղաքականությանը համապատասխան» — նշում ե կուսակցության տասնհինգերորդ համագումարը, — «առաջին հերթին պլատի ուժեղացվի արտադրության միջոցների արտադրությունը, վորպեսզի ծանր ու թեթև ինդուստրիայի, տրանսպորտի և գյուղական տնտեսության աճումը, այսինքն նրանց կողմից առաջարկված արտադրական պահանջը հիմնականում ապահոված կլիներ ԽՍՀ Միության արդյունաբերության ներքին արտադրությամբ»:

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՄՊԵՐԸ

Մենք տեխնիկական նոր բազա յենք ստեղծում: Այդ բազան ստեղծվում ե ինչպես նոր ֆաբրիկներ, գործարաններ, ցեխեր կառուցելու, նորանոր հանքեր ոգտագործելու, նույնպես և հին ձեռնարկությունները արմատորեն փոփոխելու և վերակառուցելու ճանապարհով: Առաջնակարգ շինարարության տեմպերով՝ զգալի չափով վորոշում են և մեր զարգացման ընդհանուր տեմպերն:

Վորքան շատ ենք մենք միջոցներ մտցնում շինարարության մեջ, այնքան ել արագ, լավ և եժան ե նա կատարվում: Վորքան գործի կոչվող նոր ձեռնարկությունների թիվն ավելանում ե, այնքան ել արագորեն մենք դեպի յերկրի ինդուստրիալիզացիան ենք ընթանում:

Ըսկեր Ստալինը XVI համագումարում իր զեկուցման մեջ պետական արդյունաբերության մեջ իրականում գործադրված միջոցների չափերը համեմատել ե այն չափերի հետ, վորոնք հիմնական կապիտալի վերականգման հատուկ խորհուրդի կողմից եյին հանձնարարվել:

Տարբեր մաս	Հիմն. կապ. վերականգն. հատուկ խորհրդի կողմից առաջադրված թվերը միլիոն ռուբլիներով.	Իրականում գործադրված միջոցների ինվական թվերը միլիոն ռուբ- լիներով
	1926—27 թվի գներով	1926—27 թվի գներով
1926—27	1543	1035
1927—28	1490	1304
1928—29	1320	1819
1929—30	1660	4775
Համարում	5413	8963

Յեվ այդպես՝ Հիմկապվերհատխորհը (Հիմնական կապիտալի վերականգման հատուկ խորհուրդը) կանխագծել ե այնպես կատարել առաջնակարգ շինարարությունը, վորտարեց-տարի մտցվող միջոցների գումարը պակասի: Յեվ յեթե Հիմկապվերհատխորհի ծրագրերն իրագործվեցին, մենք այս տարի 4,7 միլիարդ ռուբլու (ինչ մենք փաստորեն մտցրել ենք) փոխարեն պիտի մտցնեյինք մի միլիարդ ռուբլուց քիչ ավելի, այսինքն՝ զրեթե 5 անգամ պակաս: Հիմկապվերհատխորհի պեսսիմիստական ցուցմունքներին հակառակ՝ մեր ներդրանքները տարեց-տարի աճում են:

Ուեկոնստրուկցիոն աշխատանքների ամբողջ չորս տարիների համար Հիմկապվերհատխորհը յենթադրում եր մտցնել 5,4 միլիարդ ռուբլի, իսկապես մտցված ե 8,9 միլիարդ, ինչը ավել է կանխագծածից 3,5 միլիարդ ռուբլով, ասել ե թե 65 տոկոսով: Սրանից ընդամենը 2 տարի առաջ, յերբ հնգամյա ծրագիրն եր հաստատվում, վերջինս դասակարգային բացարձակ թշնամիների, սպիտակ գվարդիական և կապիտալիստական մամուլի կողմից չեր միայն, վոր ծաղրանքի յեր յենթարկվում: Նույնիսկ կոմունիստական կուսակցության ներսում աջ ուկանիստներն հայտարարում եյին, վոր կանխագծված տեմպերը մեր ուժերից վեր են, վոր միենույն ե՝ ծրագիրը պիտի տապալվի, և վոր մեր շինարարական նյութերը ներիք չեն, բավականաչափ մետաղ և սարքավորումները չկան:

Մենք հնգամյակի յերկրորդ տարվա վերջն ենք թեփակոխել: Ո՞վ ե արդարացի գուրս յեկել այդ վեճի մեջ: Թող այդ հարցին պատասխանեն թվերը: Հնգամյա ծրագրով 1928—29 թվին յենթադրվում եր ծախսել՝ համապատասխան տարիների գներով և միլիոն ռուբլիներով՝ 1659 մլն., իսկ մտցված ե 1679 մլն. ռուբլի: 1929—30 թ. հնգամյա ծրագրով յենթադրվում եր մտցնել 2,3 միլիարդ ռուբլի, բայց իսկապես մտցվելու յե մոտ 4 միլիարդ: Վերջապես 1930—31 թվին հնգամյա ծրագրով յենթադրվում եր մտցնել 2879 միլիոն ռուբլի, այժմ կոնտրոլ թվերը հնգամյակի յերրորդ տարվա համար 6 միլիարդ ռուբլուց ավելի յեն կանխագծում: Կամ, ուրիշ խոսքով, հնգամյա ծրագիրը հնգամյակի առաջին յերեք տարում նախատեսել ե մտցնել 6,8 միլիարդ ռուբլի, իսկ փաստորեն մտցվելու յե 11,6 միլիարդ, այսինքն՝ գրեթե յերկու անգամ ավելի: Հնգամյակի միայն յերրորդ տա-

ըում պիտի մտցվի այնքան, վորքան վոր հնդամյա ծրագրով նախատեսվում եր մտցնել բոլոր յերեք տարիներում:

Այն միշտարդները, վորոնք արդյունաբերության մեջ են մտցվում, դառնում են նորանոր ֆաբրիկներ, գործարաններ, հանքահորեր, ելեկտրոկայաններ:

1928—29 թվին շահագործվել են սկսել 64 նոր ձեռնարկություններ, վորոնց ընդհանուր արժեքը 287 միլիոն ռուբլու յե հավասար: 1929—30 թվին, միայն մինչև հունիսի 1-ը—72 ձեռնարկություն՝ 600 միլիոն ռուբլու արժողությամբ: Նոր գործարանները միայն (1926—27 թվի գներով) 1928—29 թվին 498 միլիոն ռուբլու, իսկ 1929—30 թվին 1250 միլիոն ռուբլու պրոդուկցիա յեն տվել, 1930—31 թվին տալու յեն՝ 3178 միլիոն ռուբլու:

Հնդամյակի առաջին տարում նոր ձեռնարկությունները խորհրդային արդյունաբերության ամբողջ պրոդուկցիայի միայն 3,6 տոկոսն են տվել, ընթացիկ 1929—30 թվին, ասել ե թե, հնդամյակի յերկրորդ տարում արդեն 6,7 տոկոսն են տալիս, իսկ առաջիկա 1930—31 թվին նրանք արդեն 12,2 տոկոսը պիտի տան: 1913 թվին ամբողջ ֆաբրիկ-գործարանային արդյունաբերությունը տվել ե ֆաբրիկ-գործարանային արդյունաբերությունը տվել ե 6,39 միլիարդ ռուբլու պրոդուկցիա: 1930—31 թվին միայն արդեն գործի անցած նոր ձեռնարկությունները կտան 3,17 միլիարդ ռուբլու պրոդուկցիա:

Այդ թվերը գեռ վոչ մի չափով չեն բնութագրում այն հսկայական առաջադիմությունները, վոր տեղի յեն ունեցել մեր ժողովրդական տնտեսության մեջ, զե վոր պիտի նկատի ունենալ, վոր գեռ շահագործման ե անցել նոր կառուցվող ձեռնարկությունների միայն մի փոքրիկ մասը, վոր բացի գրանից մինչև այժմ միջոցների զգալի մասը մտցվել ե հին ձեռնարկությունների մեջ: Նոր սարքավո-

րումներ կահավորելը, նորանոր շենքամասեր կառուցելը հաճախ փոխում են հին ֆաբրիկների դեմքը: Արդեն 1930 թվի հոկտեմբերի 1-ին ԽՍՀ Միության Գերագույն ժողովադատությունի կողմից պահապորվող արդյունաբերության մեջ գտնվող յուրաքանչյուր մի բանվորի կապիտալագինում՝ 1926 հոկտեմբերի 1-ի նկատմամբ՝ աճել եր 29,2 տոկոսով: Յեթե 1926 թվի հոկտեմբերի 1-ին յուրաքանչյուր մի բանվորի վրա ընկնում եր միայն 2831 ռուբ. գործարանային շենք, մեքենաներ և զանազան կահավորումներ, 1930 թվի հոկտեմբերի 1-ին այդ գումարը 3658 ռուբլի յե դառնում:

Չորս տարվա ընթացքում՝ ԽՍՀ Միությունը իր ուժերով՝ առանց վորեև արտասահմանյան փոխառությունների՝ զրեթե կրկնապատկել ե կապիտալիստական տնտեսությունից ստացած հիմնական կապիտալը: Կապիտալիստական տնտեսությունից ժառանգած 5,8 միլիարդ ռուբլուն բանվոր դասակարգն ավելացրել ե իր 4,2 միլիարդը:

Զափազանց ընորոշ ե առաջնակարգ ծախսումների բաշխում՝ ըստ արդյունաբերության առանձին-առանձին ճյուղերի: Ռեկոնստրուկցիոն ժամանակաշրջանի առաջին տարիներում առաջնակարգ շինարարությունը կենսագործվում եր գլխավորապես թեթև ինդուստրիայում և արդյունաբերության այն ճյուղերում, վորտեղ շինարարությունը այն ժամանակվա մեթոդներով և տեմպերով ամենաարագ եքֆեկտն եր աալիս:

Հսկա գործարանների կառուցմանը մենք այն ժամանակ գեռ չելինք ձեռնարկել: Ռեկոնստրուկտիվ ժամանակամիջոցի առաջին տարիների ամենամեծ շինարարությունը (Վոլխովստրոյից բացի) հազիվ կարելի լինի հաշվել Մոսկայի ելեկտրոգործարանը (սկսված 1926—27 թ.),

վորի արժեքը 50 միլիոն ռուբլի յե կազմում: Իրենց մեծաւթյամբ այն ժամանակ յերկրորդ տեղերն եյին գրավում Բալախինսկու թղթի գործարանը՝ արժեքով վոչ ավել 35 միլիոնից, Սյասկու ցելյուլոզի գործարանը—26 միլիոն ռուբլու, Գրոզնից-Ծուապսե Նավթատար խողովակը՝ 29 միլիոն ռուբլու և այլն:

Գերակշողները գեռ ել ավելի համեստ մասշտաբով կատարվող կառուցումներն եյին. որինակ՝ իվանովո-Վոլնեսենսկում ընկ. Զերժինսկու անվան մանածային գործարանը՝ 10 միլիոն ռուբլու արժողությամբ, Լակինի անվան նույնպիսի գործարանը՝ 7,5 միլիոն ռուբլու, Մոսկվայի «Կրասնիյ պաստավշչիկ» կաշեգործարանը՝ 4 միլիոն ռուբլու արժեքով, Ռոստովի՝ ընկ. Միկոյանի անվան կոշկագործարանը 2,1 միլիոն ռուբլու արժեքով և այլն:

Հնգամյակի առաջին տարին՝ 1928—29 թվականը՝ վոչ միայն ուժեղացրած առաջնակարգ ներդրումների, այլև կառուցումների մի նոր և այլ թափի տարի յե հանդիսանում: Այս տարին մենք առաջին անգամ ձեռնարկեցինք հսկաների շինարարությանը:

Հնգամյակի առաջին խոկ տարում, Ռուբալում (Մագնիսոգորսկում) մենք ձեռնարկել ենք տարեկան մոտ 2,5 միլիոն տոննա արտադրողականությամբ մետաղագործարանի կառուցման: Այդ գործարանը ամբողջ աշխարհում ամենամեծն է հանդիսանալու: Գերեթե նույնչափ արտադրողականությամբ միայն մի գործարան կա յերկրագնդի վրա: Դա Գերիի գործարանն է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Բայց այս գործարանը միանգամից չե, վոր կառուցվել ե: Տարեցտարի յեն կառուցվել նրա գաղան մասերը—ցեխները, ազգբեգատները և այլն: Էսկ մենք այդ հսկային կառուցել ենք կամենում յերկու տարվա

ընթացքում: Այդ գործարանը, մենակ ինքը պիտի տա Խորհրդային Միության մեջ մեր կողմից այժմ արտադրվող ամբողջ մետաղի կեսը:

Իր մեծությամբ յերկրորդ հսկան—Միքրում կառուցվող չուզունի (թուջի) գործարանն ե, 1.100 հազար տոննա արտադրողական ուժով:

1928—29 թվին նույնպես սկսվել եր Մտավիճակրադի տրակտորային հսկայական գործարանի, Նիժնի-Նովգորոդի ավտոմոբիլային գործարանի և մի շարք ուրիշների կառուցումը:

Մտավիճակրադի տրակտորային, Ռոստովի գյուղատնտեսական մեքենայակառուցողական գործարանները, «Կրասնիյ Պուտիլովեց»-ին կից ընկեր Կալինինի անվան տրակտորային գործարանը—ահա թե վորոնք են այն կառուցվող հսկաները, վորոնց նկատմամբ 1928—29 թվականին վոչ միայն նախապատրաստական, այլև վճռական աշխատանքներ են տարվել, վորոնք հնարավորություն են տալիս հնգամյակի յերկրորդ տարում նրանց գործի կանչելու:

1929—30 թվականը, վոր յերկրորդ տարին ե հնգամյակի, արդեն գործարան-հսկաների շինարարության լայնացյալ տարին է հանդիսանում: Թե Մագնիսոգորսկու, թե Կուզնեցկու գործարանների, թե Նիժեգորոդի ավտոգործարանի, թե Դնեպրովսկութինատի, թե Խարկովում և Զելյաբինսկում նոր կառուցվող տրակտորային գործարանների և թե Զույևի ելեկտրոկայանների նկատմամբ—առաջիկա տարում մեծ հաջողություններ պիտի հետամտենք: Բավական է միայն, իբրև որինակ, ցույց տալ, վոր այս ընթացիկ տարում մենք Մագնիսոգորսկու գործարանը կմտցնենք 40 միլիոն ռուբլի, կուզնեցկու գործարանը 25 միլիոն, Նիժեգորոդի ավտոմոբիլայինի մեջ՝ 40 միլիոն, Խարկովի

արակտորային գործարանի մեջ՝ 50 միլիոն ռուբլի և այլն։
1930—31 թվականը՝ հնդամյակի յերրորդ տարին՝ ել
ավելի մեծ մասշտաբներով, ել ավելի մեծ թափ ունեցող
տարի պիտի հանդիսանա։ 1930—31 թվին մի քանի գոր-
ծարան-հականերից յուրաքանչյուրի մեջ պիտի մտցվի հա-
րյուր միլիոն ռուբլուց ավելի միջոցներ։

Կուսակցության ասսնչորսերորդ համագումարը տե-
ղի յեր ունեցել այն ժամանակ, յերբ վերականգնողական
շրջանը նոր-նոր եր մոտենում իր վախճանին, յերբ մենք
դեռ նոր-նոր եյինք գործի զցում հին ձեռնարկությունները։
Տասնհինգերորդ համագումարը տեղի ունեցավ ուեկոնս-
տրուկցիոն շրջանի հենց սկզբին, — յերբ մենք խորհրդային
առաջին ֆաբրիկների և գործարանների հիմքերն եյինք
պատրաստում։

Տասնվեցերորդ համագումարը տեղի ունեցավ՝ ամբողջ
ֆրոնտով ամենաինտենսիվ ընդլայնված շինարարության մո-
մենտին, յերբ արդեն հաստատուն կերպով հսկաների շինարա-
րության առաջին ցիկլի ավարտման ժամկետն ե վորոշվում։

Տասնվեցերորդ համագումարի նիստերի ժամանակ
գործի յեն անցել Ստալինգրադի արակտորային գործարանը
և Ռոստովի գյուղատնտեսական մեքենագործարանը։ Դեռ
դրանից առաջ աշխատել եյին սկսել կերչի մետաղագոր-
ծարանը (մտցրված ե մոտ 60 միլիոն ռուբլի), Բագու-
թաթում նավթատար խողովակը, Մարիուպոլի խողովակային
գործարանը և ուրիշները։

1930—31 թվի ընթացքում պիտի աշխատել սկսեն
Նիժեգորոդի ավտոմոբիլային և Խարկովի տրակտորային
գործարանները, Բերեզինիկովսկու (Ուրալ) քիմիական փա-
ռահեղ կոմբինատը, Կրասնուրալսկու պղնձաձուլական գոր-
ծարանը և մի շարք ելեկտրոկայաններ։ Բայց, վոր ամե-

նակարեորն ե, — հնդամյակի յերրորդ տարիա աշխատանք-
ների հետևանքով 1931 թվի աշնանից պիտի սկսեն աշխատել
Մագնիստագորսկու և Կուզնեցկու առաջին մետաղաձուլա-
կան վառարանները (գոմնաները), հսկայական մեքենակա-
ռուցողական գործարանը Սվերդլովսկում և ուրիշ շատ տաս-
նյակ ֆաբրիկներ, գործարաններ, հանքեր, ելեկտրոկայաններ։

Սիալ կլիներ կարծելը, վոր այն շինարարությունը,
ինչ մենք կենսագործում ենք այժմ, անցյալ տարիների շի-
նարարությունից տարբերվում է իր մասշտաբով, միայն
կառուցումների վրա կատարվող ծախսերի քանակով։ Մենք
հսկայական հաջողություններ ենք ձեռք բերել և շինարա-
րության տեմպերում։ Ուեկոնստրուկցիոն շրջանի առաջին
տարիներում մոտ յերկու միլիոնի արժեքով վոչ մեծ ֆաբրի-
կայի, կամ միջին մեծության գործարանի կառուցումը պա-
հանջում եր 3—4 տարի։ Իսկ այժմ մենք Ստալինգրադի
տրակտորային գործարանը կառուցել ենք գրեթե մի տարում։

Կերչի, իր մեծությամբ միջակ հանդիսացող, մետա-
ղագործարանն սկսել ե կառուցվել 1924—25 թվին, իսկ
ավարտվել ե միայն 1929—30 թվին։ Հինգ տարի կառուց-
վել ե այս գործարանը։ Իսկ Մագնիստագորսկու գործարանը,
վորը տաս անգամ մեծ ե կերչի գործարանից, մենք պիտի
կառուցենք և կկառուցենք յերկու տարում։ Բելոռուսիայի
լուցկու փոքրիկ գործարանը կառուցվել ե յերեք տարում,
իսկ Բերեզինիկովսկու քիմիական հսկան մենք նպատակա-
գրվել ենք կառուցելու մի տարում։ Վորպեսզի մենք կա-
ռողանայինք հասնել մինչ այժմ մեզանում չտեսնիած
շինարարական այդ տեմպերին, մենք անցել ենք աշխա-
տանքների այլ մեթոդների։

Առաջ կառուցում եյին միայն ամառը, այժմ մեր լա-
վագույն կառուցումներում աշխատանքները կատարվում են

ամբողջ տարում։ Առաջ աշխատանքները կատարվում եին միայն մի սմենայով, այսինքն 24 ժամից աշխատում եին միայն 8 ժամ, — այժմ աշխատանքները կատարվում են 3 սմենայով, ուրեմն և կառուցողական աշխատանքները յերբեք չեն ընդհատվում։

Առաջ ամբողջ շինարարությունը ձեռքով եր կատարվում, այժմ, վորտեղ միայն հնարավոր ե, ակսել են մեքենաներ գործադրելը։ «Ժամանակի մինիմումը՝ առաջին աղյուսը հիմքում դնելուց հետո մինչև ձեռնարկության գործի անցնելը» — ահա թե ինչպիսի խնդիր ե դրել կուսակցությունը մեր շինարարների բանակի առաջ։

Հնգամյա ծրագիրը նախատեսել ե, վոր բոլոր առաջնակարգ ծախսումների 78,8 տոկոսը ընկնի ծանր ինդուստրիայի վրա։ Այդ պիտի այն դրությունը ստեղծեր, վոր հինգ տարում ծանր ինդուստրիայի հիմնական կապիտալն աճեր $3\frac{1}{2}$ անգամ։ Հնգամյակի սկզբին ծանր ինդուստրիայի վրա ամբողջ արդյունաբերության հիմնական կապիտալի 57 տոկոսն եր ընկնում, հնգամյակի վերջում ծանր ինդուստրիայի բաժինը պիտի հասներ 80 տոկոսի։ Այդպես եր կանխագծվել հնգամյակի ծրագրով։ Սակայն իրականում մենք շատ առաջ ենք անցնում այդ ծրագրից։

Վերջին հինգ տարիների ընթացքում ծանր ինդուստրիայի հիմնական կապիտալը 2,55 միլիարդից 6,6 միլիարդ ուղղվի յե դարձել, այսինքն՝ աճել ե 160 տոկոսով, իսկ թեթև ինդուստրիայի հիմնական կապիտալը 2,5 միլիարդից 3,4 միլիարդ ե դարձել, այսինքն՝ աճել ե միայն 34 տոկոսով։ Ծանր ինդուստրիայի առաջնակարգ շինարարության հնգամյա ծրագիրը — կարելի յե արդեն ասել գրեթե առանց կամկածելու — իրագործվելու յե յերեք տարում։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Մինչհեղափոխական արդյունաբերությունը կենտրոնացած ե յեղել մի քանի ուայոններում։ Լենինգրադը, Ռուսական, Գրոզնին, Դոնբասը, Մոսկվայի և Խանովսկու ուայոնները կենտրոնացրել եյին արդյունաբերության ամենախոշոր մասը։

Բոլոր մնացած ուայոնները միանգամայն մի կողմն եյին մնացել արդյունաբերական զարգացումից։ Միբիրի, Հյուսակին-Կովկասի, Հեռավոր-Արևելքի, Անդրկովկասի, Միջին-Ասիայի բնական հսկայական հարստությունները վոչ միայն ինդուստրիալիզացիայի սֆերայի մեջ չեյին առնվում, այլ և մնում եյին անհայտության մեջ։ Նույնիսկ Ռուսական — իր՝ յերկու հարյուր տարի դրանից առաջ ստեղծված՝ մետաղագործությամբ, հանքերով և վառելիքային ռեսուրաններով — վոչ միայն չեր հառաջաղիմում, այլ և հյուծվում եր։

Յերկրի ինդուստրիալիզացիայի շահերը, յերկրի ծայրամասերի բնական հսկայական հարստությունները բանվոր դասակարգին ծառայեցնելու անհրաժեշտությունը անհետաձգելիորին թելադրում են ուժեղացնել արդյունաբերական զինարարությունը նոր ուայոններում։ Յեվ այդ շինարարությունը կատարվում ե։ Մեր աշքի առաջ, այնաեղ, ուր հարյուրավոր կիլոմետրներով հարթակայրեր (ստեղներ) են յեղել տարածված, ուր իսկապես վոշինչ ել չի յեղել, այժմ ինդուստրիալ հսկաներ են կառուցված և կառուցվում են։ Այն ուայոններում, վօրտեղ չգիտեյին նույնիսկ, թե ինչ են ներկայացնում իրենցից մանր ձեռնարկություններն անգամ, սկզբնավորվում ե սոցիալիստական խոշոր շինարարություն։ Ահա զրանք են հենց այն հսկայական առաջնակարգությունները, վոր հնգամյակը բերում ե իր հետ նոր ուայոններին։



Հնգամյակի յերկու տարվա ընթացքում արդեն զգալի որեն աճել ե նոր ռայոնների արդյունաբերության հիմնական կապիտալը:

Այսպես, չյուսիսային յերկրի արդյունաբերության մեջ մտցված միջոցները կրկնապատկել են նրա հիմնական կապիտալը:

Ուրալի արդյունաբերության մեջ մուծվել է 591 միլիոն ռուբլի, իսկ նրա առաջիկա հիմնական կապիտալը հավասար է յեղել 302 միլիոն ռուբլու։ Ասպիսով մուծումները յերկու անգամ ավելի յեն յեղել հիմնական բոլոր ֆոնդերից։

Միքրի հիմնական կապիտալը մեծացել է 171 տոկոսով, Հեռավոր Արևելքինը՝ 167, Կազախստանինը՝ 91, Կիրգիզիայինը՝ 180 տոկոսով։

Դեռ շատ մոտիկ անցյալում՝ 1926—27 թվին՝ նոր ռայոններին (Հյուսիսային Յերկիր, Ուրալ, Նիժեգորոդի շրջան, Սիբիր, Հեռավոր Արևելք) բաժին եր ընկնում ամբողջ Միության առաջնակարգ ծախտումներից 8,9 տոկոս, 1929—30 թվականին նրանց վրա ընկել ե արդյունաբերական մուծումների 26,6 տոկոսով։ Այդ նրանով ե բացատրվում, վոր 1926—27 թվականին ամբողջ ԽՍՀ Միության մեջ նոր շինարարության վրա շատ չնշին գումարներ են ծախսվել, նրանք ընդհանուր մուծումների 14,4 տոկոսից ավելի չեն յեղել։ Բոլոր միջոցների ամենամեծ մասը ծախսվել ե հին ձեռնարկությունները վերանորոգելու, բարեփոխելու և ընդլայնելու վրա։ Քանի վոր արդյունաբերության նոր ռայոններում հին ձեռնարկություններ չեն յեղել, պարզ ե, վոր վոչինչ ել չկար վերանորոգելու կամ բարեփոխելու, վոր ծախսեր պահանջեր։

1929—30 թվին նոր շինարարության վրա ընկել ե 37 տոկոս։ Այդ նոր շինարարությունն արդեն հնարավոր

եր նոր ռայոններում տեղավորելը, զրա համար ել մենք տեսնում ենք, վոր հինգ նոր ռայոններին առաջնակարգ մուծումների մի քառորդ մասից ավելի յե բաժին ընկնում։ Այդ գեռ սկզբը ե. նոր ռայոնների ինդուստրիալիզացիայի պրոցեսը գեռ նոր ե սկսվել։

Հնգամյակի սկզբին — 1928 թվի հոկտեմբերի մեկին — Լենինգրադի և Կենարոնական Արդյունաբերական շրջաններում, ինչպես նաև Ռուսացինայում, արդյունաբերական այդ հիմնական յերեք ռայոններում կենարոնացած եր արդյունաբերության բոլոր հիմնական կապիտալների 63 տոկոսը։ Հնգամյա ծրագրով նախատեսվել եր, վոր հնգամյակի վերջում այդ յերեք ռայոնների տեսակարար կամուր — արդյունաբերական պրոդուկցիայի բաժինը — 65,3 տոկոսից կիշնի և 54,7 տոկոս կդառնա և ի հաշիվ դրան կավելանա ինդուստրիալիզացիայի յենթարկվող յերկրագործական ռայոնների և ծայրագավառների բաժինը։ Այսպես՝ մինչև հնգամյակի սկզբը Ռուսական բաժինը հավասար եր միայն 4,3 տոկոսի, իսկ հնգամյակի վերջում պիտի աճեր և դառնար 10,4 տոկոս։ այսինքն՝ պիտի ավելանար յերկու և կես անգամ։ Նույնպես կրկնապատկվում ե Սիբիրի բաժինը (1,28-ից մինչև 3,2 տոկոս)։ Զգալիորեն աճում ե նաև Կազախստանի և միջին-ասիական հանրապետությունների բաժինները։

Իրականում ծայրագավառների ինդուստրիալիզացիան հնգամյա ծրագրով նախատեսված չափերից ավելի մեծ տեմպերով ե կատարվում։ Արդեն ներկայումս արևելյան ռայոնների հնգամյակը զարգացման տեմպերի ել ավելի մեծ արագցում ե նախատեմնում։

Կուսակցության տասնվեցերորդ համագումարը մատնանշել ե, վոր անհրաժեշտ ե առաջիկա աշխատանքների ժամանակ բոլոր ջանքերը գործադրել «մոտակա ժամանա-

կամիջոցում նոր և ուժեղ քարածխամետաղագործական բազա ստեղծելու՝ Ուրալո-Կուզնեցկու կոմբինատը»:

Կուզնեցկու ածխահանքերի պահեստը հավասար է մեր բոլոր ածխապահեստների 74,5 տոկոսին, մինչդեռ Դոնեցասի ածխապահեստը ամբողջի 13,5 տոկոսին է հավասար: Կուզնեցկու տալիս ե արտադրանքի միայն 7 տոկոս, իսկ Դոնրասը՝ 77: Այս թվերը ցույց են տալիս, թե վորքան անթույլատրելիորեն վատ են ոգագործվել Կուզնեցկու բնական հարստությունները:

Մոտավորապես նույն պատկերն է տալիս և Ուրալը:

Մինչ այժմ Ուկրայինան Միության միակ մետաղահանքային բազան է հանդիսացել. այժմ կուսակցության տասնվեցերորդ համագումարի վորոշմամբ յերկրորդ բազան է ստեղծվում՝ Ուրալո-Կուզնեցկու կոմբինատը:

Ուրալո-Կուզնեցկու կոմբինատ ե կոչվում Ուրալի և Կուզնեցկու ածխահանքերի տնտեսական կապի այնպիսի կազմակերպություն, վորը այդ ուսունական դարձնելու յե միասնական կոմբինատի մասնիկներ:

Մետաղագործությունը քարածխի կարիք ունի, ըստ վորում, մինչեւ այժմ գեռ չի լուծված այն հարցը, թե արդյոք կիզիլսկու ածուխը (Ուրալում) յենթարկվում ե կոկսացման: Բայց յեթե դա նույնիսկ այդպես է, Ուրալյան մետաղագործությունն այն տեմպերով, ինչ տեմպեր այժմ տրվում են նրան, չպիտի կարողանա բավարարվել սեփական վառելիքով: Պարզ ե, վոր նա բերովի ածխի կարիք ունի: Բերովի ածուխ կարող կլինի տալ Կուզնեցկու քարածխահանքը: Մյուս կողմից ել Կուզնեցկու քարածխահանքը Ուրալի ողնության կարիքն ունի: Կուզնեցկու յերկաթահանքերն այնքան չեն հարուստ, վոր բավարարել կարողանան այնպիսի մի մեծ գործարանի, ինչպիսին Կուզնեցկու մետա-

ղագործարանն է: Բացի դրանից՝ այստեղ և յերկրորդ հակայի կառուցումն ենախատեսվում: Դրա համար ել Կուզնեցկու ածխահանքերը Ուրալի յերկաթահանքերի կարիքն են զգում:

Այդպես, Ուրալը կուզածխահանքերին յերկաթ կտա, իսկ Կուզածխահանքերն Ուրալին՝ քարածուխ, Մագնիսուգորսկու գործարանը Ուրալում և Կուզնեցկինը Սիբիրում—ահա Ուրալ-Կուզնեցկու կոմբինատի հիմնական աղյուսները:

Մագնիսուգորսկու յերկու և կես միլիոն տոննա չուգունի արտադրողականությամբ գործարանի կառուցումից բացի՝ մեծ Ուրալյան ծրագիրը նախատեսնում է Ն.-Տագիլսկու և Բակալսկու նոր մետաղագործարանների կառուցումը: 1932—33 թվին Ուրալի արտադրողականությունը պիտի լինի տարեկան 5,1 միլիոն տոննա, այսինքն՝ այնքան, վորքան վոր այժմ ամբողջ Միության մետաղագործությունն է տալիս:

Ուրալը վոչ միայն մետաղամշակույթի, այլև մեքենակառուցողական, գունավոր մետաղագործական, քիմիական արդյունաբերության կենտրոն ե դառնում: Կառուցվում է և յեկող տարվանից սկսելու յե աշխատել մեքենակառուցողական մեծ գործարանը Սվերդլովսկում, «Ստալմոտա»-ի պողպատյա կոնստրուկցիայի գործարանը: Զելյաբինսկու տրակտորային գործարանի կառուցման աշխատանքները տարվում են ընդարձակված ֆրոնտով, գունավոր մետաղի մի շարք գործարաններ են կառուցվում (Ուրալի պղնձի, Զելյաբինսկու պղնձամշակույթի, Սվերդլովսկու մետաղաելեկտրոնական, ցինկի, նիկելի գործարանները), Բերեզնիկովսկու քիմիական կոմբինատը, Կամսկու թղթյա կոմբինատը և այլն:

Ընթացիկ հնգամյակում Ուրալի ընդհանուր մեքենակառուցողական արդյունաբերության պրոդուկցիան աճելու

յե 75, գյուղա-տնտեսական մեքենակառուցման պրոդուկցիան՝ 25, ելեկտրոտեխնիկական արդյունաբերության պրոդուկցիան՝ 61 անդամ։ Ահա թե վորոնք են Մեծ Ռուսիայի դեմքը բնորոշող թվերը։

Մեր աչքի առաջ կատարվում ե և մի այլ ռայոնի — Սիբիրի վերակառուցումն։ Մինչև հեղափոխությունը Սիբիրի հարստությունները քնել եին անփարատելի քնով։ Յարական կառավարությունը Սիբիրն ոգտագործել ե միայն սիուղությամբ — իբրև բանտառեղի և աքսորավայր։ Հնգամյապլանը ուրվագծել ե Սիբիրի տնտեսության զարգացման տեմպերը։ Իրողությունը շատ ավելի յե առաջ անցել հնգամյապլանի նշանակումներից։ Սիբիրը հնգամյակը կիրագործի 3—3^{1/2} տարում։ 1930—31 թվին Սիբիրի արդյունաբերությունը 400 միլիոն ոռություն պրոդուկցիա կտա, մինչդեռ յենթադրվում եր վոր հնգամյակի վերջում Սիբիրը կտա միայն 494 միլիոն ոռություն պրոդուկցիա։ 1931—32 թվին Սիբիրն արդեն իր յետեր կժողնի հնգամյակի հանձնաբարությունը։

Կուղնեցկու մետաղագործական հսկան, Նովոսիբիրսկու գյուղատնտեսական մեքենակառուցողական և կոմբայնների գործարանը, ածխահանք հսկաները, մեքենակառուցողական, ցինկի, կապարի և տախտակի գործարանները առաջիկա տարիներում կմտնեն Սիբիրի ինդուստրիայի մեջ։

Սիբիրից և Ռուսից հետո գալիս ե կաղախստանը։ Կազախստանի նոր հնգամյա ծրագիրը հնգամյակի ընթացքում նախատեսում ե յերկրի արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիայի 15 անգամվա մեծացումն։ Յեթե Ռուսին ու Սիբիրը կոչված են ԽՍՀ Միության համար իբրև յերկրորդ քարածխա-մետաղահանքի գերը կատարելու, ապա կազախստանը կարող ե և պիտի ամենից առաջ գու-

նավոր մետաղարդյունաբերության կենտրոն դառնալ։ Այստեղ արդեն այս ընթացիկ տարում սկսվում ե պղնձաձուլական փառահեղ կոմբինատի շինարարությունը — տարեկան 50 հազար տոննա ու պղնձի և 10 հազար տոննա կապարի արտադրության հաշվով։

Ռուսալը, Սիբիրը, Կազախստանը — արևելյան այս յերեք հարուստ ռայոնները չտեսնված տեմպերով պիտի զարգանան և պիտի առաջ անցնեն հին ռայոնների ինդուստրիալիզացիայի տեմպերից։

Բայց միանգամյան սխալ կլիներ կարծելը, թե մենք, զարգացնելով նոր ռայոնները, խաչ ենք դնում հին ռայոնների վրա։ Ընդհակառակը. իր զեկուցման մեջ տասն-վեցերորդ համագումարում ընկեր Կույբըշևն ընդգծել ե, վոր նոր ռայոնների տեսակարար կշռի բարձրացումը «չի նշանակում թե այնպիսի ռայոնների, ինչպիսիները լենինգրադի, Մոսկվայի, Խանովսկու և այլ ռայոններն են, արդյունաբերության տեմպերը պիտի նվազեն։ Նրանք պիտի զարգանան վոչ պակաս տեմպերով, ինչպիսի տեմպերով զարգանում են մինչև այժմ, և դեռ արդյունաբերության մի քանի ճյուղերի նկատմամբ, ինչպես որինակ մեքենակառուցման և եներգետիկայի ճյուղերում, ել ավելի արագ տեմպերով պիտի զարգանան»։

Մոսկվայի շրջանը, ուր մինչև հեղափոխությունը թեթև ինդուստրիան — մանածային արդյունաբերությունն ե յեղել գերիշխողը, այժմ ուժեղ կերպով ծանր ինդուստրիան (մեքենակառուցումն) և զարգացնում։ Զթե Մոսկվան արդյորեն մետաղյա Մոսկվայի յե փոխարկվում։ Դեռ 1927—28 թվին ամբողջ շրջանի արդյունաբերության 80 տոկոսն ընկնում եր թեթև ինդուստրիայի վրա, ըստ վորում հնգամյակի առաջին տարում միայն տեկստիլ արդյունաբերու-

թյունը ամբողջ արդյունաբերության պրոդուկցիայի 50 տակոսն եր տալիս:

Հնդամյակի վերջում Մոսկվայի շրջանում թեթև ինդուստրիայի տեսակարար կշիռը 53 տոկոսի կիցնի, իսկ տեկստիլի տեսակարար կշիռը կհավասարվի միայն 25 տոկոսի: Ակսվել ե «Սերպ ի Մոլոտ» մետաղագործարանի ուեկոնստրուկցիան: Նորից վերաշնչում ե «Կրասնիյ Պրոլետարիյ» դադանակառուցողական գործարանը, վորը իր պրոդուկցիան կավելացնի 14 անգամ: Աճում են ելեկտրոդարանի ցեխերը: Միայն 1927—28 թվին 586 մեքենա տվող ավտոմոբիլային ԱՄՌ գործարանը 25 հազար մեքենա յետ տալու: Զորս միլիարդ ռուբլու կապիտալ կստանա Մոսկվայի շրջանը և 4,6 անգամ կավելացնի նա իր պրոդուկցիան: Այդպես ե Մոսկվայի շրջանի ապագան:

Կյանքը ջարդ ու փշուր ե արել և այն թեորիան, վոր իբրև թե Լենինգրադը, վորպես արդյունաբերական կենտրոն, չի կարող այլևս զարգանալ: Հնդամյակի առաջին տարում Լենինգրադը մեքենաների արտադրանքն ավելացրել ե 36, իսկ այս տարի ավելացրել ե 60 տոկոսով:

Ամբողջ ֆրոնտով սոցիալիստական հաղթական առաջխաղացումն ե կատարում Ուկրայնան:

Դնեպրովսկու և Զուևսկու ելեկտրոկայանները, Զապորժիսկու ու Մարիուպոլի մետաղագործարանները, Խարկովի տրակտորային հական, Կրամատորսկու մեքենակառուցողական նոր գործարանը, — այնպիսի կառուցումներ են, վոր բավականաչափ վառ կերպով պատկերում են Ուկրայնայի շինարարության թափը:

Նոր ռայոնների ինդուստրիալիզացիան մի շարք արգելքների յետ հանդիպում: Յեվ այստեղ հին ռայոնների պրոլետարիատը պիտի ողնության համար նոր ռայոնների իր

յեղբայրներին: Մոսկվայի պրոլետարիատը շեֆություն ե վերցրել Կազախստանի վրա: Տասնվեցերորդ համագումարում Սիբիրի ներկայացուցիչները խնդրել են Լենինգրադի պրոլետարիատին շեֆություն վերցնել Սիբիրի վրա:

ՀՆԳԱՄՅԱԿԻՑ ԱՆՑՈՒՄ ԵՆՔ.

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՅԵՐԿՐԻՑ ԴԱՌՆՈՒՄ ԵՆՔ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՅԵՐԿԻՐ

Մինչպատերազմյան շրջանում ամբողջ յերկրի ընդհանուր պրոդուկցիայի 42,1 տոկոսը ստացվել է արդյունաբերությունից, իսկ 57,9 տոկոսը՝ գյուղական տնտեսությունից: Մեկոնստրուկցիոն շրջանի հենց առաջին տարիներից սկսած ինդուստրիայի բաժինն անշեղորեն աճում է ի հաշվի գյուղական տնտեսության բաժնի համապատասխան նվազումից: Մինչպատերազմյան 42,1 տոկոսից արդյունաբերության բաժինը 1928—29 թվին դարձել է 48,7, իսկ 1929—30 թվին՝ 53 տոկոս: Դրան համեմատ՝ գյուղական տնտեսության բաժինը նվազում է. նա մինչպատերազմյան 57,9 տոկոսից իջել է 1927—28 թվին 54,8, 1928—29 թվին՝ 51,3, իսկ 1929—30 թվին 47 տոկոս է դարձել: Այստեղ մեջբերված են արդյունաբերության և գյուղական տնտեսության ամբողջ պրոդուկցիայի հարաբերական տվյալները: Իսկ յեթե վերցնենք ապրանքային պրոդուկցիայի համեմատությունը, այսինքն՝ յեթե ընդհանուր պրոդուկցիայից հանենք արտադրողների անհատական պետքերը հոգացող պրոդուկցիային և թողնենք միայն նրա շուկա հանգող մասը, հետևանքներն ավելի բարեհաջող կլինեն արդյունաբերության նկատմամբ: Միայն 1926—27 թվին յերկրի ամբողջ պրոդուկցիայի արդյունաբերության բաժինը կլինի 68,8 տոկոս, իսկ գյուղական տնտեսության բաժինը՝ 31,2 տոկոս: Դրանից հետո յել արդյունաբերության բա-

ժինն անընդհատ կերպով աճել ե ի հաշիվ գյուղական անտեսության ապրանքային պրոդուկցիայի նվազման. այս տարի արդյունաբերությունը տալիս է արդեն ընդհանուր ապրանքային պրոդուկցիայի 76 տոկոսը, իսկ գյուղական անտեսությունը միայն 24 տոկոս պիտի տա:

Վորպեսզի պարզենք այն պրոցեսները, վորոնք կատարվում են մեր ժողովրդական անտեսության մեջ, պիտի դեռ տեսնենք, թե արտադրության վորճուղերն են զարգանում և առաջին հերթին պիտի իմանանք, թե ինչ փոխհարաբերության մեջ են գտնվում ծանր ու թեթև ինգուտարիաները: Յեթե վերցնենք Ժող. Տնտես. Գերազույն Խորհրդի կողմից պլանավորվող արդյունաբերությունը, այսպիսի պատկեր կոտացվի. 1927—28 թվին ծանր ինդուստրիայի վրա ընկնում եր արդյունաբերության արտադրանքի 42,7 տոկոսը, 1928—29 թվին՝ 44,6, 1929—30 թվին՝ 48 տոկոս, իսկ 1930—31 թվին նա պիտի կազմի արդեն 52 տոկոսը: Միաժամանակ թեթև ինդուստրիայի, այսինքն սպառողական ապրանքներ արտադրող արդյունաբերության բաժինը սիստեմատիկաբար սկսել են նվազել. 1927—28 թվի 57,3 տոկոսից նա 1928—29 թվին դարձել ե 55,4 տոկոս, 1929—30 թվին՝ 52 տոկոս, իսկ 1930—31 թվին յենթադրվում ե, վոր նա 48 տոկոսի կհասնի:

Այսպիսով՝ ամբողջ ժողովրդական անտեսության մեջ աճում ե արդյունաբերության դերը, իսկ արդյունաբերության մեջ ել մեծանում ե ծանր ինդուստրիայի դերը: Յեվընթացիք 1929—30 թվին մեր ինդուստրիան ժողովրդական անտեսությանն ավելի շատ պրոդուկցիա պիտի տա քան գյուղական անտեսությունը, և արդյունաբերության մեջ ծանր ինդուստրիան գրեթե այնքան պիտի տա, վորքան և թեթև ինդուստրիան: Ահա թե ինչու, ընութագրե-

լով ինդուստրիալիզացիայի հաջողությունները, ընկեր Ստալինը կուսակցության 16-րդ համագումարում իր զեկուցման մեջ ընդգծել ե, վոր «մենք ագրարային յերկրից ինդուստրիալ յերկիր դառնալու վերջումն ենք գանկում»:

ՎՈԶ ԹԵ ՎԱՐԵՋՔԻ «ՀԱՆԳՉՈՂ», ԱՅԼ ՎԵՐԵԼՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՈՒՂԻՈՎ ԵՆՔ ԸՆԹԱՆՈՒՄ

1926—27 թվին ցենզային արդյունաբերության ընդհանում պրոդուկցիան մինչպատերազմյան մակարդակից ավելացել եր 7 տոկոսով: Կուսակցության XVI համագումարի նախորյակին արդյունաբերությունը իր արտադրանքի չափերով մինչպատերազմյան մակարդակից կրկնակի չափերով ավելացել եր: 1930—31 թվին արդյունաբերությունը իր պրոդուկցիան պիտի ավելացնի ելի 47 տոկոսով, այդպիսով պիտի յեռապատկե մինչպատերազմյան մակարդակը:

Այդ են վկայում պերճախոս թվերը:

Կարելի յե չկատկածել, վոր բանվորական լայն մասների աջակցությամբ «հնդամյակը չորս տարում» նշանաբանը պիտի կենսագործվի: Դեռ ավելին՝ արտադրության վորոշ ճյուղերի նկատմամբ հնդամյակը կիրագործվի վոշ թե չորս, այլ յերեք տարում:

Հնդամյա պլանով արդյունաբերությունը հնդամյակի վերջին տարում, ասել ե թե 1932—33 թվին պիտի տար 33 միլիարդ ռուբլու պրոդուկցիա: Սակայն առաջիկա 1930—31 թ. — հնդամյակի յերրորդ տարում — մենք կստանանք 26—27 միլիարդ ռուբլու պրոդուկցիա:

Գյուղատնտեսական մեքենակառուցման նկատմամբ հնդամյակը յերեք տարուց ավելի պակաս ժամանակամիջոցում ե կենսագործվելու: Հնդամյակով 1932—33 թվին

յենթաղրկում եր ստանալ 610 միլիոն դ.~ա. մեքենաներ, մինչդեռ 1930—31 թվին մենք արդեն ստանալու յենք 845 միլիոն ոռություն գ.~ա. մեքենաներ:

Նավթարդյունաբերության նկատմամբ 1930—31 թ. հնգամյա պլանից առաջ ենք անցնելու 18 տոկոսով, ելեկտրոտեխնիկական արդյունաբերության գծով՝ 21 տոկոսով, ընդհանուր մեքենակառուցողական արդյունաբերության նկատմամբ՝ 36 տոկոսով։ Ամբողջ ծանր ինդուստրիան ընդհանուր առումով 1930—31 թվականին հնգամյա պլանը կգերակատարի 11 տոկոսով։

ՀԱՍՆՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻՆ

Այսպիսով հնգամյակը վոչ միայն սահմանված չափերով, այլ ավելի չափերով ե կենսագործվում։ Բայց այդ դեռ բավական չե։ Կուսակցությունն ու բանվոր դասակարգը իրենց առաջ դրել են այս ինդիրը. — «Հասնել տեխնիկական և տնտեսապես առաջավոր կապիտալիստական յերկրներին և նրանցից ել առաջ անցնել»։

Կապիտալիստական կարգերից հյուծված արդյունաբերություն ստացած բանվոր դասակարգը այնպես պիտի սպառազինե իր ինդուստրիան, վոր խորհրդային յերկրի արդյունաբերությունը ամբողջ աշխարհում առաջին տեղից մեկը գրավե։

Ինչ կերպ ե կիրառվում այդ նպատակը։

Ընկեր Ստալինը իր զեկուցման մեջ բերեց այն աղյուսակը, վոր վերջերս հրատարակվել ե կոնյուկտուրային ուսումնասիրությունների գերմանական ինստիտուտը։ Այդ աղյուսակը ԽՍՀ Միության և խոշորագույն կապիտալիստական յերկրների արդյունաբերական արտադրության աճման թվերն ե տալիս վերջին տարիների նկատմամբ։

Հսաւ վորում, պարզվել ե, վոր, յեթե արդյունաբերական արտադրության 1928 թվի քանակը համարենք 100, ապա 1930 թվի առաջին յեռամյակում ԽՍՀ Միությունը տվել է 155,5 տոկոս, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ 95,5 տ., Անդիան՝ 107,4 տոկոս, Գերմանիան՝ 93,4 տոկոս, Ֆրանսիան՝ 113,1 և Լեհաստանը՝ 84,6 տոկոս։

Այսպիսով կապիտալիստական յերկրների շարքում միայն Ֆրանսիան ե, վոր քիչ թե շատ զգալի չափերով ավելացրել ե արտադրությունը (13 տոկոսով), սակայն չափով մոռանալ մի հանգամանք, վոր այս յերկրին ել գարգացման հետզհետե նվազող տեմպեր ե տալիս։ 1928 թ. Ֆրանսիայի պլողուկցիան աճել է 13,4 տոկոսով, 1929 թ.՝ 9,4 տոկոսով, իսկ 1929—30 թվի առաջին յեռամյակում՝ միայն և միայն 3,7 տոկոսով։

Յեկ միայն ԽՍՀ Միությունն ե, վոր տարեց-տարի հետզհետե աճող զարգացման տեմպ ե տալիս. — 1928 թ. 17,6 տոկոս, 1929 թվին 23,5 և 1930 թվին առաջին յեռամյակում 32 տոկոս։ Մեր արդյունաբերությունը աճող տեմպերով՝ ընթանում ե առաջ։ Մենք հասնում ենք տեխնիկակես առաջավոր կապիտալիստական յերկրներին, հասնում ենք, բայց պարզ ե, վոր դեռ չենք հասել։

Այսպես որինակ, չնայած մեր ելեկտրոշինարարության զարգացման չտեսնված տեմպին, չնայած վոր վերջին հինգ տարվա ընթացքում մենք վեց անգամ ավելացրել ենք ելեկտրուներգիայի մշակույթը, մենք դեռ ելեկտրոարդյունաբերության ճյուղով մյուս յերկրների նկատմամբ յետենք մնացել։ Այն ժամանակ, յերբ 1929 թվականին Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները արտադրել են 126.000 միլիոն կիլովատ-ժամ, կանադան՝ 17.678 մի-

լիոն կիզովատ ժամ, Գերմանիան՝ 33.000 միլիոն կ.-ժ., Իտալիան՝ 11.850 միլ. կ.-ժ. — ԽՍՀ Միությունը արտադրել է միայն 6.465 միլիոն կիլովատ-ժամ:

Այսպես եւ պատկերը նաև սև մետաղագործության ասպարիզում: Այս ընթացիկ տարում, — չնայած վոր վերջին յերեք տարում մենք արտադրությունն ավելացրել ենք 100 տոկոսով, — տալու յենք 5,5 միլիոն տոննա չուզուն: Նույն ժամանակամիջոցում Հ.-Ամեր. Միաց. Նահանգները տալու յեն 42,3 միլիոն, Գերմանիան՝ 13,4 միլիոն տոննա և Ֆրանսիան՝ 10,45 միլիոն տոննա չուզուն:

Չուզունի արտադրության չափերը արտադրության մյուս ճյուղերի չափերն ել են վորոշում: Յեվ յեթե այս տարի սև մետաղագործության գծով Հ. Ա. Մ.-Նահանգներից 8 անգամ պակաս ենք տալիս, ակնահայտ ե, վոր մոտավորապես նույն չափերով մենք յետ ենք մնացի և մեքենակառուցողական արդյունաբերության նկատմամբ:

Դրա համար ել վորքան մեծ են մեր հաջողությունները, այսուամենայնիվ դեռ շատ համառ աշխատանք պիտի գործադրենք, վորպեսզի հասնել կարողանանք կապիտալիստական յերկրներին և կարողանանք նրանցից առաջ անցնել:

ՍԵՎ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԼԵԿՏՐՈԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՈՒՍՐԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ ԲԱԶԱՆ ԵՆ

Սև մետաղագործությունը արտադրության այն ճյուղն է հանդիսանում, վորով արդյունաբերության մնացած ճյուղերի աշխատանքն է վորոշվում: Սև մետաղագործության արտադրության չափերից են կախված մեքենակառուցողական արդյունաբերության աշխատանքները, ելեկտրիֆիկացիայի և տրանսպորտային շինարարության (ռելտեր) չափերը:

Մեքենակառուցողական արդյունաբերության չափերն ել իրենց հերթին տնտեսության մնացած ճյուղերի, առանձնապես գյուղական տնտեսության (գ. տ. մեքենաների և գործիքների արտադրությունը), զարգացման չափերն են վորոշում: Դրա համար ել չուզունի և պողպատի արտադրության մասշտաբով կարելի յե դատել ընդհանրապես տվյալ յերկրի արդյունաբերական արտադրության չափերի մասին:

Մինչ այժմ սև մետաղագործության տեմպերը յետ ելին մնում ընդհանուր առումով ամբողջ արդյունաբերության զարգացման տեմպերից: Նույնիսկ անցյալ տարի, վոր հնգամյակի առաջին տարին եր հանդիսանում, մենք վոր հնգամյակի առաջին տարին եր հանդիսանում, մենք դեռ յետ ելինք մնում մինչպատերազմյան մակարդակից:

Մինչպատերազմյան 4,2 միլիոն տոննա չուզունի փոխարեն մեր մետաղագործությունը 1928—1929 թվին տվել է միայն 4,1 միլիոն տոննա: Մենք տեսանք, վոր ամբողջ արդյունաբերությունը ընդհանուր առումով 1926—27 թվին առաջ եր անցել մինչպատերազմյան մակարդակից, իսկ սև մետաղագործությունը մինչպատերազմյան մակարդակից առաջ ե անցել միայն 1929—30 թվին:

Այսպիսով սև մետաղագործությունը յերեք տարով ու հասել մինչպատերազմյան մակարդակին՝ քանի մնացած ամբողջ արդյունաբերությունը: Այդ բացատրվում է նրանով, վոր հենց այստեղ ե արտադրության ռեկոնստրուկցիան, ավելի բարդ, և վոր արտադրության հենց ստրուկտիվ, ավելի բարդ, և վոր արտադրության հենց այս ճյուղում ե, վոր ռեկոնստրուկտիվոն աշխատանքները մեծ ծախսումներ, արտադրության հատուկ զարգացած տեխնիկա յեն պահանջում:

Համեմատաբար հետեւ տեկստիլ կամ կոշկեղենի ֆաբրիկ կառուցելը, այնքան ել բարդ գործ չե շաքարի գոր-

ծարան կառուցելը, բայց միանդամայն տարբեր բան է մետաղագործական նոր գործարան կառուցելը կամ նորեն վերակահավորելը:

Իզուր չե, վոր հնդամյակի շուրջը յեղած բոլոր վեճերը մեծ մասով սև մետաղագործության հնդամյակի շուրջն են պտտել: Այդ հասկանալի յե: Սև մետաղագործության հնդամյակով, ինչպես մենք տեսանք, ամբողջ արդյունաբերության հնդամյակն է վորոշվում:

Վերջնականապես հաստատված հնդամյա պլանը հնդամյակի վերջին տարվա — 1932—33 թվի համար՝ 1928—29 թվի 4,1 միլիոն տոննայի դեմ՝ նախատեսել ե 10 միլիոն տոննա չուփուն: Ուրիշ խոսքով՝ հինգ տարվա ընթացքում չուփունի արտադրությունը պիտի մեծանար $2^{1/2}$ անգամ: Այս թիվը սվինների վրա յեր առնվել: Մի շարք խոշորագույն մասնագետներ ապացուցում ենին, վոր 6—7 միլ. տոննայից ավելի և վոչ մի դեպքում մենք չենք կարող ստանալ:

Այժմ XVII համագումարն իսկապես 10 միլիոն տոննայի քանակը սխալ, անճիշտ ե համարել: Բայց սխալ ե վոչ թե նրա համար, վոր նա մեծ ե, այլ նրա համար վոր նա ՓՈՔՐ ե: 17 և վոչ թե 10 միլիոն տոննա չուփուն պիտի տա հնդամյակի վերջում մեր սև մետաղագործությունը: Այսպիսով հենց այն անիրազրծելի ճանաչված հնդամյա պլանը մեծացրվել ե այժմ 70 տոկոսով: Յեվ արդեն հնդամյակի չորրորդ տարում — 1931—32 թվին մեր սև մետաղագործությունը պիտի տա 10 միլիոն տոննա չուփուն:

Հարց ե ծագում. ինչու այդքան մեծացել ե մետաղի կարիքը, ուրիշ խոսքով՝ ինչու յենք մենք ընդլայնում սև մետաղագործությունը:

Մեր մեքենակառուցողական, տրակտորակառուցողական, ավտոկառուցողական և ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը զգալի կերպով առաջ ե անցնում հնդամյա պլանով նշված չափերից: Տրակտորային, ավտոմոբիլային, մեքենակառուցողական նոր գործարանները հնդամյակի կողմից նշված նախնական ժամկետներից ավելի շուտ կլինեն պատրաստ: Այդ բոլոր գործարաններին մետաղ ե հարկավոր: Արտադրության այդ բոլոր ճյուղերի համար ել բավական չեն մետաղի այն չափերը, ինչ ուրվագծել են հնդամյա պլանով: «Մետաղ շատ ե պետք» — հրամայողաբար պահանջում են նրանք: Հենց այդ ել հարկադրում ե ընդլայնել ամբողջ սև մետաղագործությունը:

Մագնիսոգորսկու, Կուգնեցկու, Զապորոժսկու, Մարիուպոլի և Ն.-Տագիլսկու մետաղագործական հինգ հսկաները հնդամյակի վերջին տարում տալու յեն 5,5 միլիոն տոննա չուփուն, այսինքն այնքան, վորքան այժմ մեր ամբողջ սև մետաղագործությունն ե տալիս:

Մնացած միլիոնները պիտի ստացվի այժմ աշխատող գործարաններն արմատապես վերակառուցելու ճանապարհով: Առաջին հերթին ուկոնստրուկցիոն փառահեղաշխատանքներ են տարվելու Տոմսկու (Մականկա), Զերժինսկու (Կամենսկայա) և Վորոշիլովի (Ալչևսկ-Դոնեցաս) անվան գործարաննում:

Երկրի ինդուստրիալիզացիայի յերկրորդ բարոմետրը ելեկտրոֆիկացիան ե, բոլոր ֆաբրիկներն ու գործարաններն ել կարիք ունեն մեքենաներ աշխատեցնող ելեկտրական եներգիայի: Դրա համար ել ելեկտրոներգիան յերկրի ինդուստրիալիզացիայի լավագույն աստիճանացույցն ե հանդիսանում: Ելեկտրոֆիկացիայի մակարդակից ե կախված ամբողջ արդյունաբերության զարգացումը — արտադրու-

թյան ընդհանուր մակարդակը: Վորքան ասես ֆաբրիկներ և գործարաններ կարելի յե կառուցել, բայց յեթե կանխավ չմտածենք ելեքտրոսպասարկության մասին, կառուցված գործարաններն անգործության կդատապարտվեն:

Մեր ելեկտրոարդյունաբերությունը արագորեն աճում է: 1930 թվի հոկտեմբերի 1-ին ելեկտրոկայանների ուժը 1162 հազար կիլովատի յեր հավասար՝ մինչպատերազմյան 147 հազար կիլովատի դեմ: Ուրիշ խոսքով՝ ելեքտրոկայանների մինչպատերազմյան ուժն ավելացվել է ութ անգամ: Այդպիսի տեմպեր չգիտե մեր տնտեսության և վոչ մի ճյուղը: Վոչ թե 15, ինչպես այդ յենթագրվում եր, այլ ճյուղը: Վոչ թե 15, ինչպես այդ յենթագրվում եր, այլ ճյուղը: Վոչ պլանը իրադորձված կլինի ելեկտրոֆիկացիայի պլանը: Այդ պլանը իրադորձված կլինի վոչ թե 1935, այլ 1931 թվին: Բայց և այնպես այսաեղ ավելի, քան մի վորեն այլ տեղ, մենք պետք են զգաստ լինենք: XVI համագումարը ընդունել է ելեկտրոներգիայի արտադրության ել ավելի արագ տեմպերի անհրաժեշտությունը:

Հնդամյա պլանի կատարումը չորս և չորսից պակաս տարիներում, մի շաբթ նոր ֆաբրիկների ու գործարանների՝ սահմանված ժամկետներից առաջ՝ գործի անցնելը պահանջում են ամեն կերպ արագացնել ելեկտրոներգիայի արտադրության թափը: Արդեն այս տարի՝ հիմնված այլ արտադրության թափը: Արդեն այս տարի՝ հետ միաժամաների աշխատանքները շարունակելու հետ մասնակ՝ մեծ չափերով նոր շինարարություն է սկսվել:

Ենինգրագի շրջանում (Դուբրովսկում) նոր հսկայական ելեկտրոկայանի շինարարությունն է սկսվել (200 կան ելեկտրոկայանի շինարարությունն է սկսվել), Մուկվայի շրջանում—Բոբրիկովի հազար կիլովատի ուժով), Մուկվայի շրջանում—Բոբրիկովի կառուցվում է 174 հազար կիլովատ ուժով, ելեկտրոկայաններ են կառուցվում նայե Ուկրայինայում—Զու-

յակում, Ուրալում—Զելյարինսկում, Իվանովսկու շրջանում—Յուժսկում և այլն:

Հնդամյակի առաջին տարում ելեկտրոշինարարության մեջ է մտցվել 220 միլիոն ոռուբրի, 1929—30 թվին մտցվել է 640 միլիոն, իսկ 1930—31 թվին պիտի մտցվի 1180 միլիոն ոռուբրի: Ուրիշ խոսքով՝ ելեկտրոշինարարության մեջ կատարվող մուծումների չափերը տարեցտարի գրեթե կրկնապատկվում են:

ԶՊԵՏՔ Ե ՆԵՐՄՈՒԾԵՆՔ, ԱՅԼ ԻՆՔՆԵՐՍ ՊԻՏԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԱՐՏԱԴՐԵՆՔ

Ընթացիկ 1929—30 թվին խորհրդային մեքենակառուցղական արդյունաբերությունը՝ 1926 թվին 453 միլիոն ոռուբրու դեմ՝ կտա 1250 միլիոն ոռուբրու պլրոդուկցիա: Յերեք տարվա ընթացքում մեքենակառուցղական արդյունաբերությունն աճել է գրեթե յերեք անգամ: Արդեն 1929—30 թվին մեր մեքենակառուցղական արդյունաբերությունը արտադրության մինչպատերազմյան չափերը յեռապատկել է:

Այսպիսով մեր մեքենակառուցղական արդյունաբերությունը իր զարգացման տեմպերով իր յետեն է թողել արդյունաբերության բոլոր մնացած ճյուղերն: Արդյունաբերությունն ընդհանուր առումով այս տարի մինչպատերազմյան չափերը գերազանցելու յե 2,1 անգամ:

Այսուամենայնիվ չնայած վոր մեքենակառուցղական արդյունաբերության զարգացումը չտեսնված չափերով է կատարվում, մեքենակառուցղական արդյունաբերությունը, ինչպես գտավ կուսակցության XVI համագումարը, «Ճողովրդական տնտեսության մեջ ամենանեղ տեղն է հատկացնում, այդպիսով սահմանափակելով թե արդյու-

նաբերությունը, և թե ամբողջ ժողովրդական տնտեսությունը:

Ահա թե ինչու կուսակցության 16-րդ համագումարի վորոշումներին ի հետևումն ժող. Տնտ. Գերազույն Խորհուրդը բոլոր միջոցները գործ ե դնում՝ արագացնելու մեքենակառուցողական արդյունաբերության զարգացման թափը: Առաջիկա 1930—31 թվին յենթադրվում ե խորհրդային մեքենակառուցողական շինարարության չափերն ընդարձակել յերկու անգամ—1250 միլիոնից մինչեւ 2500 միլիոն ոռություն: Տրանսպորտի սարքավորման արդյունաբերությունը մեծանում է 2,4 անգամ, ընդհանուր մեքենակառուցողական արդյունաբերությունը՝ յերկու անգամ:

Այդպիսի նոր թոփչք հնարավոր ե միայն այն պայմանով, վոր մինչև վերջը իրացվեն բոլոր այն հսկայական արտադրական ռեզերվները, վոր մինչև այժմ դեռ չեն ոգտագործվել: Վոր մեքենակառուցողական գործարանների արտադրական ռեզերվները դեռ ամբողջովին չեն ոգտագործվել, և վոր մենք այստեղ դեռ հսկայական աշխատանք ունենք կատարելու, —այդ յերեսում ե հետեւյալից: —առանձնակի գործարանների ռեսուրսների հետ լավ ծանոթանալը բավական յեղավ, վորպեսզի հնարավոր դառնար ծրագիրն անմիջապես մի քանի անգամ մեծացնելը:

Ամենից առաջ չի կարելի հաշտվել այն դրության հետ, վոր մեքենակառուցողական գործարանները որվա մեծ մասը չեն աշխատում: Ամբողջ մեքենակառուցողական արդյունաբերությունը մի քանի սմենաներով կատարվող աշխատանքի սիստեմի տակ դնելը ամենախոշոր և առաջին ռեզերվ:

Մինչ այժմ անընդհատ արտադրության ե անցել մեքենակառուցողական արդյունաբերության կեսից վոչ ավե-

լին: Այս տարի անընդհատ արտադրության պիտի անցնի և մյուս կեսը: —ահա յերկրորդ ռեզերվը:

Սովորաբար այն ցեխերը (դարբնոց, ձուլարան), վորտեղ առանձին գետալերի արտադրությունն ե կատարվում, արտադրողական ավելի քիչ ընդունակություն են ունենում քան մեխանիկական—ժողովող ցեխերը, այսինքն՝ քան այն ցեխերը, վորտեղ այդ գետալերի հավաքումն ե կատարվում: Յեկ շատ հաճախ, աննշան ծախսեր կատարելու ճանապարհով, ընդլայնելով այդ նեղ տեղերը, հաջողվում ե զգալիորեն մեծացնել ամբողջ գործարանի արտադրությունն ընդհանուր առումով: Նեղ տեղերի լայնացումը—ահա մեքենակառուցողական արդյունաբերության արագացման յերրորդ աղբյուրը:

Վերջապես հսկայական հնարավորություններ ե խոստանում և կարող ե մեզ տալ և մասսայական արտադրության սպեցիալիզացիայի սկզբունքների կիրառումը կյանքի մեջ: Մեր մեքենակառուցողական գործարանների հսկայական մասը չափազանց լայն ասսորտիմենտով են կառուցված:

Արտադրության սպեցիալիզացիան սերտորեն կապված է ստանդարտիզացիայի և մասսայական արտադրության հետ: Միայն նեղ սպեցիալիզացիայի պայմաններում գործարանը կարող կինի լայն մասսայական ապրանքներ բաց թողնել: Մենք այժմ մեքենակառուցողական արդյունաբերության մեջ մասսայական արտադրության սպեցիալիզացիայի միայն սաղմերն ունենք:

Յեկ վերջապես՝ վերջինը: Մեր արդյունաբերության մեջ մի քանի աշխատակիցներ իրենց համար սովորություն են դարձրել դեպի միջակ և փոքր գործարանները աղայական ծաղրանքով վերաբերվելու: Իբրև թե նրանց միայն

հսկաներ պիտի տալ, Մինչդեռ միջակ և փոքր գործարան-ները շատ հաճախ իրենց մեջ լայն հնարավորություններ են բովանդակում, վոչ միայն փոքր գործարանները, այլև կուստար արդյունաբերությունը պիտի ծառայեցնել յերկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի գործին:

Մեր մեքենաարդյունաբերության խնդիրները վոչ մի գեղում չեն սահմանափակվում հին արտադրությունների հասարակ քանակական ընդարձակումով: Իհարկե, այդ ել և հարկագոր: Տասնյակ հազարավոր կաթսաների փոխարեն մեզ հարյուր հազարավոր կաթսաներ են պետք: Հարյուրափոր տուրբինների փոխարեն մեզ հազարավորներն են պետք: Բայց միաժամանակ անհրաժեշտ ե ամեն կերպ վոտքի կանգնեցնել նոր արտադրությունը, անհրաժեշտ ե կաղմակերպել այն մեքենաների արտադրությունը, վորոնք մինչև այժմ մեզ մոտ յերեք ել չեն յեղել: Մենք կարող ենք հպարտանալ այն հաջողություններով, վոր մենք ձեռք ենք բերել այս ասպարիզում: Նոր արտադրությունների միայն չոր ու ցամաք թվարկությամբ մենք կարող ենք մի քանի տասնյակ յերեսներ լցնել, բայց և այնպես այս դեռևս միայն առաջին քայլերն են արվել:

Մենք արդեն կանգ առանք այն յեղանակների վրա, վորոնց միջոցով մենք կարող ենք արագացնել մեքենակառուցողական արդյունաբերությունը: Անհրաժեշտ ե և պետք ցույց տալ՝ խորհրդային մեքենաարդյունաբերության ուղիների վրա յեղած մի արգելքի վրա ևս, այդ արգելքը արդյունաբերության աշխատակիցների կոնսերվատիվմն ե՝— ինչ կերպ ել վոր ուղում ելինի, պատվերն անպայման արտասահմանին: «Խորհրդային գործարանը»—մտածում ե խորհրդային կոնսերվատորը—«կարող ե պատահել, վոր պատուերը չկատարի ժամանակին և բացի դրանից՝

համենայն դեպս արտասահմանյանը ավելի լավ ե խորհրդայինից»: Պիտի ուժեղ կերպով հարվածել իմպորտի այդ սիրահարներին: Բայց այդ դեռ քիչ ե: Այդ գեռ քիչ ե, վոր սպառող տրեստներն ու գործարանները հայտարարեն, թե իրենք խորհրդայինը գերադասում են արտասահմանյանից: Պիտի աշխատել, վոր նրանք այնպիսի պայմաններ ստեղծեն, վոր խկապես խորհրդային մեքենան կարողանա փոխարինել արտասահմանյանին: Իսկ դրա համար ամենից առաջ պիտի պատվերը իր ժամանակին տալ, վորպեսզի խորհրդային գործարանը կարողանա նախապատրաստվել այդպիսիները կատարելու:

Դոյություն ունեցող մեքենակառուցողական գործարաններում ամեն կերպ արտադրությունն արագացնելով, մենք միաժամանակ արագացնում ենք և նոր գործարանների շինարարությունը: Սվերդլովսկու, Կրամատորսկու, Լուգանսկու գործարանները, Մուկվայի, Նիժնի-Նովգորոդի և Խարկովի գաղգհակառուցողական գործարանները, Մուկվայի ինստրումենտալ գործարանը, Ռուբալի պողպատյակոնստրուկցիայի, Լենինգրադի և Խարկովի տուրբինային գործարանները,—բոլորն ել առաջիկա տարիներում պիտի գործող ձեռնարկությունների շարքն անցնեն: Մենք պետք ե մաքսիմալ չափերով արագացնենք այդ գործարանների կառուցումը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ Ե

Դեռ մոտիկ անցյալում սմիջկայի համար հիմնական ձյուղ է համարվել տեկստիլ արդյունաբերությունը: Լայն սպառողական, ամենից առաջ տեկստիլ ապրանքների, առաջին հերթին չթի արտադրությունը քննության ե տոնվել

իբրև սմիջկալի հիմնական մեթոդ։ Քաղաքը գյուղին տվել ելայն սպառողական (առաջին հերթին տեկստի) ապրանքներ և փոխարենը հաց ու գյուղատնտեսական այլ ապրանքներ ե ստացել։ Այժմ արտադրական այդ սմիջկան զգալիորեն առաջ ե անցել։ Քաղաքը գյուղին պիտի տա վոչ միայն լայն սպառողական ապրանքներ, այլ և առաջին հերթին արտադրության գործիքներ։

Գյուղական տնտեսությունը արմատական կերպով վերակառուցվում է։ XVII համագումարն ընդգծել է, վոր և կուսակցության XV համագումարից հետո անցած $\frac{21}{2}$ տարվա ժամանակամիջոցը ԽՍՀ Միության գյուղական տնտեսության մեջ մեծ բեկման շրջան է յեղել (Կուխողներն 1928 թվի գարնանն ունեցած մեկ և կես միլիոն հեկտար ցանքադաշտերը 1930 թվի գարնանը 30—35 միլիոն հեկտար են դարձել, Խոշոր սովորողներ ստեղծելը, վոր այս ընթացիկ տարում 1,6 միլիոն տոննացից ավելի ապրանքային հաց պիտի տա, հացահատիկային կարեռագույն ույացներում միջակ գյուղացիական զգալի մասի սոցիալիստական ճանապարհ թեվակոխելը։ Գյուղի կապիտալիստական տարրերի իրավունքները սահմանափակելու քաղաքականությունից գյուղի կուլակությունն իբրև դասակարգի վերացնելու քաղաքականությանն անցնելը։ — ահա թե ինչի մեջ ե կայանում այդ բեկումը։

Բեկումը հնարավոր դարձնող ֆակտորների շարքում՝ անկասկած առաջին տեղից մեկն ե գրավում «գյուղական տնտեսությունը կուլտիվ սկզբունքներով վերակառուցելու բանալին հանդիսացող ինդուստրիալիզացիայի զարգացման» արագ թափը (Համ. Կոմ. կուսակցության (բ.) XVII ամագումարի բանաձեից՝ Յա. Յակովլիկի գեկուցման առթիվ)։

Մենք հսկայական գումարներ ենք մտցնում գյուղական տնտեսության վերակառուցման մեջ։ 1927—28 թվին այդ նպատակով ծախսվել է 647 միլիոն ռուբլի, 1928—29 թվին՝ 1030 միլիոն, 1929—30 թվին՝ մոտ 1700 միլիոն ռուբլի։ Մենք լայնորեն ընդարձակել ենք կոլխոզ և սովորող շինարարությունը, մենք գյուղական տնտեսության հիմքը մեքենական հաստատուն բազայի վրա յենք զնում, մենք մեքենատրակտորային կայարանների հսկայական ցանց ենք կառուցում։

Այս փառահեղ գործում հսկայական դեր պիտի խաղաղ արդյունաբերությունը։ Գյուղական տնտեսությունը շատ, չափազանց շատ մեքենաներ ե պահանջում։ Գյուղատնտեսական մեքենակառուցողական և տրակտորակառուցողական արդյունաբերության ընդլայնման տեմպերով զգալիորեն վորոշվում են և գյուղական տնտեսության վերակառուցման տամպերը։ Մինչև պատերազմը մեր գյուղական մեքենակառուցողական արդյունաբերությունն արտադրել է 120 միլիոն ռուբլու, իսկ ընթացիկ 1929—30 թվին նույն արդյունաբերությունը արդեն բաց ե թողնելու 410 միլ. ռուբլու պրոդուկցիա, ուրիշ խոսքով՝ մինչպատերազմական չափերից $\frac{3}{2}$ անգամ ավելի։ Առաջին 1930—31 թվին գ. տ. մեքենաների արտադրությունը նորեն կրկնապատկելու յե յերկու անգամ, հասնելով այնպիսի մի հսկայական թվի, ինչպիսին 845 միլիոն ռուբլին ե. Արդեն 1930—31 թվին հնդամյա պլանը, ըստ վորի 1932—33 թվին յենթադրվում եր 845 միլիոն ռուբլու մեքենաներ ստանալ, կենսագործված կլինի։

Մինչ հեղափոխական Ռուսաստանը գրեթե չգիտեր, թե ինչ ե տրակարը։ Այժմ մեր դաշտերում արդեն 70 հազար տրակտորներ են աշխատում, վորոնցով հերկվելու

յե 12 միլիոն հեկտար տարածություն։ Բայց այդ դեռ տրակտորի հաղթական առաջին քայլերն են։ Շուտով ԽՍՀ Միությունը տրակտորային արտադրության տեսակետից ամբողջ աշխարհում առաջնակարգ տեղերից մեկն ե զրավելու։ Արդեն 1930—31 թվին մենք կարտադրենք 51,5 հազար տրակտոր, այսինքն մի քիչ պակաս՝ այժմ մեր դաշտերում աշխատող տրակտորների ամբողջ քանակից։ Մինչդեռ տրակտորային շինարարության եֆֆեկտը դեռ նոր ե միայն զգացվում։ Գալիք 1930—31 թվին 50 հազար տրակտոր արտադրելու ուժ ունեցող Ստալինգրադի տրակտորային գործարանը տալու յե միայն 30—35 հազար։ «Կրասնիյ Պուտիլովեց»-ը, վոր 25 հազար տրակտոր արտադրելու կարողություն ունի, տալու յե միայն 20 հազար։ 1931—32 թվին Ստալինգրադի գործարանն ու «Կրասնիյ Պուտիլովեց»-ը կաշխատեն ամբողջ թափով և յերկուսը միասին 75 հազար տրակտոր։

Բացի դրանից, այդ ժամանակներում աշխատել ե սկսելու տրակտորային և յերրորդ հական (50 հազար տրակտոր արտադրելու ուժով)։ Այն ժամանակ անշուշտ, շահագործվել կակասի և Զելյարինսկու գործարանը։ Մոտ 150—175 հազար տրակտոր—այդպիսի արտադրողականություն և ունենալու մեր տրակտորային պլողուկցիան հնդամյակի վերջում—1932—33 թվին։ Այժմ տրակտորներ արտադրողներից ամենաառաջինը Հյուս։ Ամեր. Միացյալ-Նահանգներն են, ուր բաց են թողնում 220 հազար։

Զափազանց բնորոշ ե այն, վոր հնդամյա պլանով մենք յենթադրում ենք 1932—33 թվին բաց թողնել 5 հազար տրակտոր։ Այդ հաշվով, վոր, յեթե արդյունաբերության վորոշ ճյուղերի նկատմամբ հնդամյակը մենք ավարտում ենք 4, վորոշ ճյուղերի նկատմամբ $3\frac{1}{2}$ այլ

ճյուղերի նկատմամբ ել՝ 3 տարում, ապա տրակտորային արդյունաբերության նկատմամբ կարելի յե ասել, վոր մենք կատարել ենք արդեն հնդամյա պլանը կրկնակի չափեցով, մենք արդեն բաց ենք թողել 11 հազար տրակտոր։

1929—30 թվին մեզանում իբրև փորձ յերևան են յեկել առաջին մեկ և կես հազար կոմբայնները։ Բայց շուտով մենք նրանցից ասանյակ հազարավորները կարտադրենք։ Ամբողջ թափով կոմբայնի գործարաններ են կառուցվում Սարատովում և Նովոսիբիրսկում։ Առաջին 1930—31 թվին յենթադրվում ե նման մի գործարանի կառուցումը Խոստովում։ Բատ վորում մեզ հաջողվել ե կազմավորել սեփական կոնստրուկցիայի կոմբայններ (կոնստրուկտորն ինժիներ Բորոդինն ե), վորոնք արտասահմանյանների հետ համեմատած զգալի տնտեսումն են կատարում։

Տրակտորն ու կոմբայնը ջնջում են սեփականատիրական սահմանագծերը և իսկական հեղափոխություն են առաջացնում զյուղում։ Վոչ պակաս գեր ունի կատարելու և քիմիական արդյունաբերությունը։ Սոլիկայսկու կալիոնը, սուլպերֆոսֆատը, ֆոսֆորիտը, Խիբինսկու ապատիտը—դրանք ես կարենոր զենքեր են բերքատվությունը բարձրացնելու, զյուղական տնտեսության զարգացման նոր ուղիները գարբնելու պայքարի համար։

Յեթե արդյունաբերության բոլոր մնացած ճյուղերի գծով մենք դեռ միայն ձգտում ենք կապիտալիստական յերկրներին հասնելու, զյուղական տնտեսության կարիքները սպասարկելու արդյունաբերության գծով մենք յեկող մեր յետեր կթողնենք այդ յերկրներին։ ԽՍՀ Միությունը յեկող տարի կարտադրե գյուղատնտեսական մերենաներ և տրակտորներ մեկ միլիարդ ոսւբլու։

Շատ չի անցել այն ժամանակներից, յերբ աջ ուկ-
լոնիստները արդյունաբերության զարգացման չափերին
հակաղը ում եյին գյուղատնտեսության զարգացման չափերը։
Նրանք պահանջում եյին մեղմել ինդուստրիալիզացիայի
զարգացման տեմպերը գյուղական տնտեսության աճումն
արագացնելու համար։ Այդպես պահանջելիս նրանք աչքա-
թող եյին անում արդյունաբերության և գյուղական տն-
տեսության միջև յեղած անքակտելի կապը։ Նրանք աշ-
քաթող եյին անում այն հանգամանքը, վոր արդյունաբե-
րության մեջ մուծվող ամեն մի կոպեկն ել անմիջա-
պես ազդում ե գյուղական տնտեսության վրա, թեկուզ
հենց հազարավոր գյուղատնտեսական նոր գործիք-
ների, տրակտորների, պարարտանյութերի և այլն կեր-
պարանքով։

Ինդուստրիալիզացիայի ճանապարհին մեր ամեն մի նոր
հաղթանակը միաժամանակ գյուղական տնտեսությունը
կուեկտիվացման ճանապարհով վերակառուցման յենթար-
կելու գործում ձեռք բերվող նոր հաղթանակ և նշանա-
կում։ Ահա թե ինչու կուսակցության XVI համագու-
մարը կենտկոմի գեկուցման առթիվ ընդունած բանաձե-
վում, — բնութագրելով այն խնդիրները, վորոնց լու-
ծելու համար կենտկոմը պիտի կենտրոնացնե կուսակ-
ցության ջանքերը, — առանձնապես ընդգծում ե «գյու-
ղական տնտեսության մաշինիզացիան և տրակտորիզա-
ցիան ամեն կերպ զարգացնելու, սովորողային հնգա-
մյակը յերեք տարում կատարելու, ամբողջ ԽՍՀ Միու-
թյան, սահմաններում գյուղացիական տնտեսություն-
ների համատարած կոլեկտիվացիան հաստատուն մեքե-
նատրակտորային բազայով հիմնավորելու» անհրաժեշ-
տությունը։

ԹԵԹԵՎ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ

Մենք տեսանք, վոր ամբողջ արդյունաբերությունն
ընդհանուր առումով իր յետեն ե թողնում՝ և այն ել զգալի
հեռավորությամբ՝ հնգամյա պլանի նախնական նշանակում-
ները։ Մենք տեսանք, վոր արդյունաբերության զանա-
գան ճյուղերի մեծ մասը հնգամյա պլանը կատարել ե
3—4 տարում։

Այդ միևնույն ժամանակ արտադրության մի քանի
ճյուղերը վոչ միայն չեն առաջանում պլանից, այլ և նույն-
իսկ յետ են մնում։ Այդպես ե գրությունը թեթև ինդուս-
տրիայի մի քանի ճյուղերում, այսինքն լայն սպառղական
ապրանքներ արտադրող արդյունաբերության մեջ։

Մինչդեռ թեթև ինդուստրիայի մի քանի (ձկնեղենի,
կռնսերֆլերի, զգեստներ կարելու) ճյուղերը գերազան-
ցում են հնգամյա պլանը, մնացած ճյուղերը յետ են մնում
նրանից։ Ճիշտ ե, ամբողջ թեթև ինդուստրիայի նկատմամբ
ընդհանուր առումով մենք հնգամյա պլանը և ենսագործում
ենք կատարելապես։ Այսպես, 1928—29 թվին, մենք թեթև
ինդուստրիայի գծով արտադրությունն ընդլայնել ենք 19,
1929—30 թվին 21,9 և ընթացիկ տարվա յոթ ամսվա
ընթացքում 17,3 տոկոսվ։

Ուրեմն ավելի պիտի ուժեղացնենք մեր ուշադրու-
թյունը արտադրության այն ճյուղերի վրա, վորոնք յետ
են մնում ծրագրից։ Այդպես ե, զիսավորապես, դրությունը
շաքարեղենի և տեկստիլ արդյունաբերության մեջ։ Հնգամ-
յակի առաջին տարում բամբակյա գործվածքներն արտա-
դրվել են պլանից 1 տոկոս պակաս։ Նույն տարում բամ-
բակի թել արտադրվել ե 3,3 տոկոսով պակաս, մասր կաշ-
վեղեն՝ 13 և շաքարավագ՝ 4,5 տոկոսով պակաս։

Ել ավելի զգալիորեն յետ ենք մնացել հնդամյակի յերկորդ տարում։ 1929—30 թվին մեր տնտեսությունը պլանի սահմանած չափերի հանդեպ պիտի պակաս ստանաբամբակյա գործվածքներ՝ 12,1 տոկ., բամբակյա մանվածք 15,5 տոկ., մանր կաշվեղեն՝ 10,5 տոկ., շաքարավագ՝ 48,5 տոկ., ռաֆինադ՝ 49,7 տոկոսով։ Հնդամյակից յետ են մնում և ծխախոտի ու կտավի ճյուղերը։

Ի՞նչ պիտի անել, վոր կանոնավորվի թեթև ինդուստրիան։ Թեթև ինդուստրիային պետք ե բավականաչափ հումույթ տալ։ Արդեն այս տարի մենք զգալիորեն ընդահակել ենք բամբակի և շաքարեղենի ցանքսերը։ Բայց ցանքսերի ընդարձակումը դեռ բավական չե։ Ել ավելի կարևոր բերքատվության բարձրացումն ե։

Այստեղից պարզ ե, վոր թեթև ինդուստրիան մենք կարող ենք բարելավել գյուղական տնտեսությունը՝ արմատավես վերակառուցելու ճանապարհով։ Հումույթի հիմնական արտադրողը վոչ թե գյուղացիական մանր տնտեսությունը, այլ խոշոր, մեքենայացրված, հողի մշակության գործում կատարելագործված յեղանակներ կիրառող կոլլտողը, սովորող պիտի լինի։ Պիտի վորոշ ուայոններ սպեցիալիզացիայի յենթարկել այն հաշվով, վոր այդ ուայոնների հողերի 25 տոկոսը զբաղված լինի կտավատի ցանքսերով, ուր պիտի հնարավոր դառնա տրակտոր և այլ մեքենաներ լայնորեն գործադրելը, բամբակի խոշոր արտադրությունը արագորեն ընդարձակելը — ահա մեր առաջ գրված խնդիրները։

Այս գարնանն արդեն սովլխողներն ու մեքենա-տրակտորային կայանները 200 հազար հեկտար հող են մշակել բամբակացանի տակ։ Խնդիր ե գրված, վոր 1931 թվի գարնանը հինգ անգամ ավելանա այդ թիվը և բամբակացանի տակ լինի մի միլիոն հեկտար տարածություն։ Ցեթե հա-

ցահատիկային պրոբլեմը վճռված ե հիմնականում, ապա հումույթային պրոբլեմի լուծումին դեռ ենք դիմում։ Կուսակցության XVI համագումարը Համկոմկումի կենտրոնին առաջարկել ե սամենակար ժամանակամիջույթ այս կամ կույթի համար կամ կույթի գյուղատնտեսական հումույթայի գարգացման կոնկրետ պլանը և վերջինս կենսագործելն ապահովող ձեռնարկությունների ծրագիրը մշակելու։

Մենք պետք ե վորքան կարելի յե շատ բամբակ, կտավատ և բուրդ ստանանք։ Բայց և դրանով չպիտի սահմանափակվենք։ Մենք կարող ենք և պետք ե հումույթի նոր տեսակներ ձեռք բերել բանվոր դասակարգին սպասարկելու համար։ Լենինգրադում արդեն արհեստական թեփ նոր ֆաբրիկ ե աշխատում։ Պիտի արագացնել և նոր կառուցվողների բացումը (առաջին հերթին Մոդիլևսկում և Կլինսկում)։ Այդ զգալիորեն կմեծացնի լայն սպասողական ապրանքների ֆոնով։ Պիտի մաքամալ չափերով արագացնել սովլխողների կանեփային և քենդիրի արտադրությունը, վոր տեկստիլ արդյունաբերության համար նոր տեսակի հումույթի աղբյուր կծառայի։ Գանգրամազ կտավատը, քենդիրը և ուրիշ շատ և շատ բույսեր հումույթներ են, վոր մինչև այժմ դեռ չեն սպասործվել և ոգտագործվելուց զգալիորեն կմեծացնեն տեկստիլ արդյունաբերության հումույթային ուսուուրմաները։

Հումույթային բազան ընդարձակելու համար մղվող աշխարը չի սահմանափակվում տեկստիլ արդյունաբերությամբ։ Հումույթը կարևոր ենակ ու ետքինի արդյունաբերության համար, վորը մինչև այժմ ամբողջովին արտասահմանյան կառուցական գործարքության մուտքագրության մուտքագրության մուտքագրության սահմաններում — կազմակերպություն (կոնգրիլա և Միության սահմաններում)։

տառւեզըյց), Ուկրայինայում (վատոչնիկ), Անդրկովկասում (գվայուլա) մի շարք բույսեր են գտնվել, վորոնցից մենք կարող ենք արդեն կառչուկ ստանալ: Յեկող տարի մենք արդեն 2 հազար տոննա խորհրդային կառչուկ կունենանք:

Մենք պիտի հնարավորության չափ շատ ստանանք հումույթի հին տեսակները, մենք պիտի հումույթի նոր տեսակներ ստեղծենք, բայց և միաժամանակ մենք պիտի վորքան կարելի յե խնայողաբար ծախսենք մեր ունեցած հումույթը: Խնայողության խնդրում մեր դրությունը հեռու յե բարեհաջող կոչվելու հնարավորությունից: Այսպես որինակ՝ յուրաքանչյուր մի մետր գործվածքի վրա անգլիական արդյունաբերությունը ծախսում է 242 դրամ բուրդ, ամերիկական արդյունաբերությունը նույն չափի գործվածքի վրա ծախսում է 153 դր., իսկ մենք դեռ մոտիկ անցյալում ծախսում եյինք 794 դրամ: Մենք, այսպիսով, 5,18 անգամ ավելի յենք ծախսում քան ամերիկական արդյունաբերության մեջ են ծախսում և 3,28 անգամ ել ավել ենք ծախսում քան անգլիական մահուդի արդյունաբերությունն ե ձախսում:

1929—30 թվին մենք կարողացել ենք վերոհիշյալ մեր շափերից տնտեսել բրդի ծախսումները 18—20 միլիոն ռուբլու. բայց և այնպես մենք դեռ շատ և շատ հեռու յենք գտնվում ամերիկական չափերից: Յեկ յեթե մենք կարողանայինք մեր արտադրության մեջ արտասահմանյան մեթոդները կիրառել, մենք մի հարվածով (հումույթի միենույն քանակով) կեռապատկեցինք բրդե գործվածքների քանակը և այդպիսով հիմնովին վերացրած կինենք բրդեցեն գործվածքների գեֆիցիտը:

Բարմբակագործական, ծխախոտագործական և կաշվեղործական արդյունաբերության մեջ նաև, կասկածից դուքս

ե, վոր հումույթն ոգտագործելը լավացնելու գծով կարելի յե խոշոր ռեզերվներ տնտեսել:

ԱՊԱՀՈՎԵՆՔ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Վերջին տարիներում մենք հսկայական չափերով ընդլայնել ենք թղթի արդյունաբերությունը: Կառուցվել ե և արդեն աշխատում են թղթի յերեք նոր գործարաններ (Բալախինսկու, Կոնդոպահմկու, Սյասկու ցելյուզի գործարանը): Մեր մամուլի աճումը հսկայական չափերի յե հասնում: Բավական ե հիշատակել, վոր մենք այժմ ինն անգամ ավելի թերթ և չորս անգամ ավելի գիրք ենք հրատարակում քան 1917 թվին: Բայց և այնպես դա չափազանց քիչ ե բազմամիլիոն աշխատորմասաների պահանջների հետ համեմատած: Նույնիսկ յետամաց իսպանիայում մի հոգու վրա մեկ և կես անգամ ավելի յե թուղթ ընկնում քան մեզ մոտ յենթադրվում ե վոր պիտի ընկնի հնգամյակի վերջում: Հ. Ա.մ. Մ.-Նահանգներն արդեն այս տարի գերազանցել են մեր հնգամյալանը 14 անգամ:

Թղթի պակասության շնորհիվ մենք ստիպված ենք լինում կրծատելու թերթերի և մասսայական քրքույթների ծավալն ու տիրաժը, մենք արհեստական կերպով կրծատում ենք տեխնիկական, գյուղատնտեսական և այլ գրքերի հրատարակությունները:

Միայն յերկու տարի սրանից առաջ մեր տպարանները շատ քիչ եյին ծանրաբեռնված և պոլիգրաֆիական արեստներն աղահարար պատվերներ եյին փնտում:

Այժմ ամբողջ պոլիգրաֆիական արդյունաբերությունը ծանրաբեռնելու գանգարեանված ե անկարելիության սահմաններին հասնող չափերով: Բայց

դրանից՝ մեր տպարանների սարքավորումներն ել չափա-
զանց մաշվել ու խունացել են: Պոլիգրաֆիական ձեռնարկու-
թյունների սարքավորումների հակայական մասը
կիսաբնվալիդներ են՝ 20—30 և նույնիսկ հիսուն տարեկան:

Չնայած վոր վերջին տարիներում զգալի հաջողաւ-
թյուններ ենք ձեռք բերել՝ դեռ մեր յերկիրը սուր քաղց և
զգում կինոյի և ռադիոկահավորման տեսակետից:

Այստեղ հիմնական դժբախտությունը նրա մեջ ե կա-
յանում, վոր մենք մինչև այժմ՝ ավելի չափերով քան մի
այլ տեղ՝ կախված ենք կապիտալիստական յերկրներից:
Վոչ պոլիգրաֆիական կահավորումներ և վոչ ել թղթի մե-
քենաներ ենք արտադրել, զրեթե ամբողջ մեր ունեցածը
ներմուծել ենք արտասահմամից, Յեթե մենք ցանկանում
ենք, վոր կուլտուրական հեղափոխությունը տեխնիկական
ուժեղ բազայի վրա դրվի, — մենք ամենից առաջ պիտի
պոլիգրաֆիական և թղթի մեքենակառուցողական արդյու-
նաբերություն ստեղծենք:

ԶՊԵՏՔ Ե ՀԱՎԱՍԱՐՎԵԼ ՆԵՐ ՏԵՂԵՐԻՆ, ԱՅ ՊԻՏԻ

ՈՒՂՂԵԼ ԱՅԴՊԻՄԻՆԵՐԸ

Մինչև պատերազմը քիմիական արդյունաքե-
րությունը մեզանում միայն սաղմային զրության մեջ
ե գոյություն ունեցել: Մի շարք քիմիական արտադրու-
թյուններ մենք նոր ենք սկսել: Այդպիսիք են՝ անիլո-ներ-
կային, անտառա-քիմիական և կոկսո-քիմիական արտա-
զրությունները. այդպիսիք են՝ արհեստական թելի և հագ-
վագյուտ ելեմենտների արտադրությունները: Հնգամյա-
պլանով նախատեսնվում եր հինգ տարում արտադրությունը
մեծացնել հինգ անգամ: Միանգամյան պարզ ե, վոր այդ
հսկայական պլանն իրագործելը հեշտ բան չե, բայց ե

այնպես վոչ միայն սահմանված չափերով, այլ և ավե-
լին պիտի իրագործել:

1930—31 թվի պլանով յենթադրվում է, վոր հնգամ-
յակի առաջին յերեք տարիներում քիմիական հիմնական
արդյունաքերության պրոդուկցիան պիտի աճե 290 տո-
կոսով, մինչդեռ հնգամյա պլանով յենթադրվում եր, վոր
այդ յերեք տարիներում նա պիտի աճե միայն 172 տոկո-
սով: Այսուամենայնիվ քիմիական արդյունաքերության մեջն
ել մենք նոր նեղ տեղեր ունինք: Այդպիսի նեղ տեղ ե
հանդինանում ծծմբաթթվութիւնի և սուպերֆու-
ֆատի արտադրությունը:

Յերկրորդ նեղ տեղը մեր տնտեսության մեջ գու-
նավոր մետաղագործությունն ե: Այստեղ ևս մենք
մեծ հաջողություններ ենք ձեռք բերել: Հնգամյակի առա-
ջին յերեք տարիներում մենք ավելացնելու յենք պրոդուկ-
ցիայի չափը $2^{1/2}$ անգամ, ինչ զգալի չափերով ավել ե
հնգամյա պլանի նախագծից: Բայց դա նույնպես քիչ ե:
Տնտեսության մնացած ճյուղերի արագ զարգացումը պա-
հանջում է, վոր նույնպիսի արագությամբ զարգանա և
գունավոր մետաղագործությունը: Պղինձը, ցինկը, կա-
պարը այժմ զրեթե ամենաղեփիցիտավոր նյութերն են
հանդիսանում: Իսկ անցյալ տարի ցինկի արտադրության
ծրագիրը կատարվել է միայն 45,6 տոկոսով: Այս տարի ևս
պլանով նախատեսված քանակից զգալի կերպով քիչ պիտի
արտադրվի ցինկը: Գունավոր մետաղագործության զար-
գացման տեմպերը մեծ չափերով կախված են նոր շինա-
րարության տեմպերից: Գունավոր մետաղագործությունը
ևս մենք արդյունաքերության ջահել ճյուղերից մեկն ե
հանդիսանում: Բավական ե, ոլինակ, հիշատակել, վոր հինգ
տարվա ընթացքում ցինկի արտադրությունը մենք պիտի

ավելացնենք 25 անգամ, — 1927 — 28 թվի 3,1 հազար տոննայի դիմաց հնգամյակի վերջում 77,5 հազար տոննա պիտի ստացվի. կապարի արտադրությունը պիտի մեծացնենք 13 անգամ (3 հազար տոննայի դիմաց պիտի ստանանք 38,5 հազար տոննա), Գունավոր մետաղագործության ասպարիզում մենք հսկայական շինարարություն ենք կատարում:

Կրասնոուրալսկի պղնձաձուլական կոմբինատը, Բելովի (Սիբիր) ցինկի գործարանը, Առոլիո-Աթայի (Կազախստան) կապարացինկային կոմբինատը, Պերմի ռայոնի կապարացինկային գործարանը, Զելյարինսկու ցինկի գործարանը, Կազախստանի յերկու ալյումինի և մեկ պղնձաձուլական գործարանները — ամենախոշոր շինարարություններից են:

Յերկրի ինդուստրիալիզացիան մինչև այժմ չտեսնված, հսկայական չափերով փայտ, ցեմենտ, կրակից չվախեցող նյութեր և աղյուս ե պահանջում:

«Տարեցատարի մեծանում ե արդյունաբերության մեջ մտցվող միջոցների քանակը և ժողովրդական տնտեսությունը», — մատնանշել ե XVI համագումարը, — «պետական և կոոպերատիվային արդյունաբերությունից կառուցողական նյութեր (փայտ, ցեմենտ, աղյուս և այլն) ե գարգացմանայնպիսի տեմպեր ե պահանջվում, վոր համապատասխանելին ինդուստրիալիզացիայի յենթարկվող ժողովրդական տնտեսության կողմից առաջադրվող կարիքներին»:

Անցած 1928 — 29 թվին կառուցողական նյութերի արդյունաբերությունը իր պրոդուկցիան ավելացրել ե 62,8 տոկոսով, այս ընթացիկ տարում — 1929 — 30 թվին — պիտի նորեն իր արտադրությունը մեծացնի 67,7 տոկոսով: Սյստամենայիվ կառավարությունը շինանյութերի հսկա-

յական պակաս ե զգում ու շինանյութի մթերող մարմինները հարկադրված են հաշվի առնելու աղյուսի, ցեմենտի, փայտեղենի յուրաքանչյուր մի վագոնը: Մինչդեռ այս գծով հսկայական ուղերձվեր ունեն վոչ միայն պետական արդյունաբերությունը, այլ և պրոմիսլային կոոպերացիան: Մենք սկսել ենք նոր շինանյութեր (Արթիկի տուֆ, պեմզա և այլն) գործադրել մեր շինարարության մեջ: Այս ուղղությամբ աշխատանքները նոր են սկսվել:

Այս ուղղությամբ մենք կարող ենք և պետք ե հսկայական արդյունքներ ունենանք յեթե մենք կատարենք կուսակցության 16-րդ համագումարի վորոշումը, վորով նամատնանշում ե, վոր «պիտի մեծ ուշադրություն դարձնել շինանյութերի նոր տեսակների արտադրության վրա»:

ԽՍՀ Միության ինդուստրիալիզացիան մեր յերկրի անհաշիվ բնական հարստությունները տրամադրում ե բանվոր դասակարգին սպասարկելու: Բայց այդ հարստություններն ոգտագործելու համար պիտի դրանք ուսումնասիրել: Մինչդեռ մեր յերկրախորշերի հարստությունների ուսումնասիրությունը բավականաչափ չե կատարված: Միայն մի քանի տարի սրանից առաջ մեր յերկրաբանները գտել են Սոլիկամսկու կալիոնն և Ուրալի նավթը: Դեռ նոր ե աշխարհն իմանում, վոր մեր հյուսիսային յերկրամասը ապատիտի (ապարատանյութ ե, վոր իր մեջ ի միջի այլոց ֆոսֆորաթթվուտային կիր ե բովանդակում) հսկայական հարստություններ ունի:

Բայց վորպեսզի մեր արդյունաբերությունը կարողանանք ճշտորեն տեղակորել մենք չենք կարող սահմանափակել այդպիսի պատահական ռդյուսերով: Մենք պիտի լավ ճանաչենք մեր ամբողջ յերկիրը: Մինչդեռ մեր յերկրի ծանաչենք մեր ամբողջ յերկիրը: Մինչդեռ մեր յերկրի ծանադաշտագալակում գեռ ուսումնասիրված չեն: Սիբիրը, Կա-

դախստանը, Ուրալը Կովկասը հազիվ թե 20 — 25 տոկոսով
ուսումնասիրգած լինեն: Մնացած 75 տոկոսը միանգամայն
անձանոթ, միանգամայն չուսումնասիրգած վայրեր են հան-
դիսանում, վոր իրենց մեջ, անկասկած, հսկայական հարա-
տություններ են պարփակում: Ուսումնասիրության տեսա-
կետից ել ավելի վատթար դրության մեջ են միջին-ասիական
հանրապետությունները, նույնիսկ մեր արդյունաբերական
հիմնական ռայոնները, նույնիսկ Դոնբասն ու Մոսկվայի
շրջանը լիովին չափերով չեն ուսումնասիրգած:

Դրա համար ել XVI համագումարը դիրեկտիվ ե տվել
վճռական կերպով բեկումն կատարել «յերկրաբանական-
ուսումնասիրական աշխատանքներում և այդ գործը
լիովին ապահովել նյութական բազայով, այս
ուղղությամբ վերաքննության յենթարկելով
յերկրաբանական - ուսումնասիրական գործի
հնգամյա պլանը»:

Զալետք ե հավասարվել նեղ տեղերին, այլ պետք ե
ամբողջ ուշադրությունն ու բոլոր ուժերը լարել նրանց
վերացնելու համար: Ահա մեր կուսակցության XVI համա-
գումարի ցույց տված ճանապարհը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՍՈՑԻԱԼ-ՇՆՏԵՍԱԿԱՆ ՆՎԱԶՈՒՄՆԵՐԸ, ԳՈՐ-
ԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՈՒՄՆ ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ
ՔԱՆԱԿԻ ՄԵԾԱՑՈՒՄԸ

Յերկրի ինդուստրիալիզացիան հսկայական հարգած ե
հասցըել պրոլետարիատի սոցիալական ամենամեծ թշվա-
ռությունը հանդիսացող գործազրկությանը: Այն ժամա-
նակ, յերբ կապիտալիստական յերկրներում գործազրկու-
թյունն աճում ե տարեց տարի, այն ժամանակ, յերբ Հյու-
սիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 6 միլիոնից

ավելի, Գերմանիայում 5 միլիոն, Անգլիայում 2 միլիոն,
Իսալիայում, Հարավային Աֆրիկայում, Յավոնիայում մե-
կական միլիոն, Լեհաստանում, Չեխո-Սլովակիայում, Ավ-
ստրիայում 500 հազարական գործազրկներ կան, — մեր
մոտ գործազրկների թիվը անընհատ նվազում է:

Միայն վերջին կես տարվա ընթացքում մեզ մոտ գոր-
ծազրկների թիվը պակասել ե 40 տոկոսով: Ամբողջ ան-
ցած տարվա ընթացքում գործազրկների թիվը մեղա-
նում պակասել ե 700 հազարով: 1929 թվի ապրիլի 1-ին
աշխատանքի բորսաներում ցուցակագրված են յեղել
1.700 հազար գործազրկներ, 1929 թվի հոկտեմբերի 1-ին
այդ թիվը 1.200 հազար ե դարձել, իսկ 1930 թվի ապ-
րիլի 1-ին իջել ե արգեն և 1 միլիոն ե դարձել:

Իսկն ասած՝ մեզ մոտ յեղածը գործազրկություն կոչել
չե կարելի: Վորովինեակ այն գործազրկները, վորոնք
ցուցակագրված են մեզ մոտ, չեն կարողանում աշխատանք-
ցուցակագրված են մեզ մոտ, չեն կարողանում աշխատանք-
ցուցակագրված են նրա համար վոր բանվորներ պետք չեն,
այլ դեպքերի ճնշող մեծամասնությամբ նրա համար են
միայն նրանք մնում անգործ, վոր նրանց պետք ե սովո-
րեցնել: Այ, որինակ, Մոսկվայի աշխատանքի բորսայում
150 հազար գործազրկ բանվորներ կան: Արդյունաբերու-
թյունը միայն ապրիլ ամսում 108 հազար բանվոր ե պա-
հանջել, իսկ բորսան ուղարկել ե միայն 80 հազար մարդ:
Բորսան անկարող ե յեղել ևս 28 հազար բանվոր խնդրաբ-
ար կող արդյունաբերության պահանջը բավարարել: Բորսան
չի կարողացել բավարարել քարտաշներ, վորմաղիքներ,
ճականագործներ, մեքենավարներ, ապակեգործ-
ներ և այլ վորակի բանվորներ խնդրող պահանջները: Դրա
համար ել մեզ մոտ խոսվում ե վոչ այնքան գործազրկ-
ների մասին, վոչ այնքան գործազրկության զեմ-

կովելու մասին, վորքան խոսվում ե բանվորների պակասի մասին, բոլոր ուժերով բանվորական նոր կադրեր ստեղծելու մասին։ Յերկրի ինդուստրիալիզացիան արագ կերպով առաջ բերեց խորհրդային պրոլետարիատի թվական աճումն։ 1926—27 թվի 11 միլիոնի դեմ 1929—30 թվին մեզ մոտ վարձով աշխատողների ընդհանուր թիվը հավասարվել է 13,1 միլիոնի, այսինքն՝ յերեք տարվա ընթացքում բանվոր դասակարգի թիվը աճել է 19,5 տոկոսով։ Այդ ժամանակամիջոցի նկատմամբ ինդուստրիալ բանվորների աճման տոկոսը 24-ի յե հավասար։ Պրոլետարիատը քանակով մեծանում է բոլոր ռայոններում, բայց առանձնապես մեծ նշանակություն ունի պրոլետարական խավի աճումը այժմ զուտ յերկրագործական ճանաչված ռայոններում և աղգային հանրապետություններում։ Հնդամյակի առաջին յերկու տարվա մեջ աղգային ռայոններում արդեն սեփական պրոլետարական կորիզներ են ստեղծվել։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ԿԱՐՑԱՑՈՒՄՆ ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ

Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ ԽՍՀ Միության կենտրոնակոմի կողմից հրատարակված մանիֆեստով նախագծվել է ամբողջ ԽՍՀ Միության մեջ հետզետե ութից յոթժամյա որին անցնել։ Արդեն յոթժամյա բանվորական որի յե անցել բոլոր բանվորների 41,1 տոկոսը, իսկ 1929—30 թվի վերջում յոթ ժամ աշխատելու յե բանվորության մոտավորապես 45 տոկոսը։ Բացի դրանից գետնի տակ կատարվող և առողջության համար վնասակար բոլոր սրտադրություններում վեցժամյա բանվորական որ ե սահմանված։

Ընթացիկ 1929—30 թվին արդյունաբերությունն սկսել ե անընդհատ արտադրությանն անցնել և 1930 թ. ոգոսառնին բոլոր բանվորների 67,5 տոկոսն արդեն անընդհատ շաբթվան ե անցել։ Այդ նշանակում ե, վոր այժմ յուրաքանչյուր մի բանվոր հանգստանում ե ամեն մի հինգերորդ որը (յոթերորդի փոխարեն), XIV և XVI համագումարներնիրարից բաժանող $4\frac{1}{3}$ տարվա ժամանակամիջոցում ինդուստրիալ բանվորների աշխատավարձն աճել է 75 տոկոսով։ ամսեկան 43-ից մինչև 76 ոռութիւն։

Բանվոր դասակարգի նյութական դրության վրա զգալիորեն ազդել ե և գործազրկության նվազումը։ Շատ բանվորական ընտանիքներում ավելացել է աշխատող ընտանիքի անդամների թիվը։ Շնորհիվ դրան 1929—30 թվի առաջին կիսամյակում բանվորական ընտանիքի յեկամուտը մեծացել է 15—16 տոկոսով։

Սիսակ կլիներ բանվոր դասակարգի նյութական դրության մասին խոսել՝ յելնելով բացառապես բանվորների ստացած աշխատավարձից։ Պակաս նշանակություն չունի և այսպես կոչված աշխատավարձի հանրայնացված ֆոնդը։ Հեղափոխությունը բանվոր դասակարգին սոցիալական ապահովագրության՝ ամբողջ աշխարհում ամենակատարյալ միատեմն ե բերել։ Գրեթե մեկ և կես միլիարդ ոռութիւն (1,4 միլիոնարդ) — այդչափ է մեր սոցիալական ապահովագրության բյուջեն։ Հնդամյակի առաջին յերկու տարում ժամանակավոր աշխատանքի անընդունակության վրա ծախսվել է 631 միլիոն ոռութիւն, բժշկական ոգնության վրա — 576 միլիոն ոռութիւն, սանատորիաների, կուրորտների, հանգստայան տների միջոցով անցել են 1928—29 թվին 546 հազար մարդ, 1929—30 թվին — 671 հազար մարդ։

Հսկայական չափերի յե՛ հասել բանվորական բնակա-
քանային շինարարությունը՝ Վերջին յերեք տարվա ընթաց-
քում բանվորական բնակարաններ կառուցելու վրա ծախսու-
ված է 1,8 միլիարդ ռուբլի: 12½ միլիոն քառակուսի մետր
բնակարանային մակարդակ է կառուցվել վերջին յերեք
տարվաընթացքում: Ամեն մի մարդուն՝ բնակարանային մա-
կարդակի միջին նորման ավելացել է 4,9-ից մինչև 5,2 քա-
ռակուսի մետր:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԵՎԵՐԸ

Վերջին յերկու տարիները չափազանց մեծ չափերով
ակտիվացրել են բանվորներին արտադրության մեջ: Սո-
ցիալիստական մքցությունն ու հարվածայնությունը գրա-
վել են բանվորական լայն մասսաներին: Պետպանի կողմից
հետազոտված 491 ձեռնարկություններում սոցիալիս-
տական մքցությանը մասնակցում է բանվորության 72 տոկոսը: Վերջերս բանվորական նախա-
ձեռնությունը արտադրական ինքնազործնեյության մի շարք
նոր ձևեր ե առաջադրել: Մելմաշտրոյում բանվորների
նախաճեռնությամբ ծնունդ առած, այսպես կոչված, հար-
վածային միջանցուկ բրիգադի որինակը արագ կերպով վեր-
ցնում են մնացած ֆարբիկներն ու գործարանները: Մի-
ջանցուկ հարվածային բրիգադի իմաստը նրանում է կա-
յանում, վոր նա տվյալ ցեխում վոչ միայն արտադրու-
թյունը, այլ և արտադրական ամբողջ պրոցեսն է ընդգր-
կում, — նույնն է անում նա, յեթե նույնիսկ մի քանի
ցեխեր ե պարփակում և յեթե նույնիսկ նա դուրս ե գա-
լու տվյալ գործարանի սահմաններից:

«Կամանիյ Պուտիլովեց»-ում հարվածայիններն սկսել
են արտադրությունը պլանավորելն ու կանոնավորելը սո-
վորել: Պանային բյուրոներում ուստինյորները, հին սովո-
րություններին կառչած մարդիկ ելին նստել, վորոնք չելին
կարողանում հետեւել կյանքի տեմպերին: Հարվածային-
ներն իրենց միջավայրից ոպերատիկ-պլանով որո՞
խմբակներ են առաջադրել:

Դեռ ել ավելի մեծ տարածումն է ստացել
այսպես կոչված «հասարակական բուկուրը», —
լավ աշխատող ձեռնարկությունների արտադրական ոժան-
դակությունը՝ իրենց նվաճումները, փորձը փոխանցելով
այն ձեռնարկություններին, վորոնք յետ են մնացել: Վեր-
ջերս ել, այսպես կոչված «հանդիպակած արդիինալանի»
հարվածայնության նոր ձևն է առաջացել:

XVI համագումարն ամբողջ վճռողականությամբ ընդ-
գծել է, վոր «արհմիությունների աշխատանքների աշխա-
ժակցման և լավացման, ինչպես նաև բանվորական մասսա-
ներին արտադրությունը զեկավարելու մեջ հիմնական և
վճռական ողակը սոցիալիստական մքցությունն է և վերջ-
նիս յերեխան — հարվածայնությունը»:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՏ Ե ՄՆՈՒՄ ՊԼԱՆԻՑ

Յուրաքանչյուր մի բանվորի արտադրանքի չափերի
տեսակետից մենք չափազանց յետ ենք մնացել մնացած
յերկրներից:

Մեր հանքերում աշխատող բանվորի արտադրողակա-
նությունը 4½ անգամ ցածը է Հյուսիսային Ամերիկայի
Միացյալ Նահանգներից, մետաղագործինը պակաս է գրեթե
6 անգամ, շաքարագործինը՝ 7 անգամ, մանածային բան-

վորինը՝ Յ^{1/2} անգամ։ Այս յետամնացության հիմնական պատճառն իհարկե խորհրդային և ամերիկական արդյունաբերության տեխնիկական գարգացումների տարբերության մեջ ե կայանում։ Վորքան շատ սպառազիններ մենք մեր արդյունաբերությունը, նույնքան և կաճե մեր նոր ֆարբիկների, գործարանների, մեքենաների թիվը և նույնքան ել արագորեն կը արձացնենք աշխատանքի արտադրողականությունը, նույնքան ել շուտ մեր խորհրդային բանվորը կարող կլինի կապիտալիստական յերկրների բանվորների չափերով արտադրանք տալու։ 1926—27 թվին աշխատանքի արտադրողականությունն աճել է 12,9 տոկոսով, 1927—28 թվին՝ 13,6 տոկոսով, 1928—29 թվին՝ 15 տոկոսով, 1929—30 թվին առաջին յոթ ամսվա ընթացքում՝ 16,8 տոկոսով, իսկ ամբողջ տարվա նկատմամբ յենթադրվում է, վոր արտադրողականությունն աճելու յե 25 տոկոսով։

Հնգամյա պլանով յենթադրվում է հինգ տարվա ընթացքում 1926—27 թվի համեմատությամբ ավելացնել յուրաքանչյուր մի բանվորի արտադրանքի չափը 110 տոկոսով։ Փաստորեն հնգամյակի չորրորդ տարում արդեն կենացործված կլինի հինգ տարվա համար սահմանված արտադրողականության աճման վերոհիշյալ չափը։

Բայց և այնպես այս ասպարիզում ևս գեռ չի արված այն ամենը, ինչ կարելի յեր և ինչ պետք է արվեր։ Վերջին յերկու տարվա ընթացքում աշխատանքի արտադրողականությունը յետ է մնում պլանից։ Հնգամյակի առաջին տարում պլանով սահմանված 16,8 տոկոսի փոխարեն արտադրանքն աճել է 15,5 տոկոսով։ Հնգամյակի յերկրորդ տարվա առաջին յոթ ամսում 25,3 տոկոսի փոխարեն աճել է 16,8 տոկոսով։

Ինչի մեջ են կայանում պլանից յետ մնալու պատճառները։ Պատճառները շատ են։ Վարչական-տեխնիկական

պենքառնալի կողմից բանվորներին մատուցվող ինստրուկտաժի վատությունը, ռացիոնալիզացիայի յենթարկելու աշխատանքին վոչ բավականաչափ ուշադրություն դարձնելը։ Բայց կասկածից դուրս ե, վոր խոշոր գեր են կատարում և աշխատանքի կարգապահության պակասությունն ու բանվորական ուժի վոչ մշտականությունը։ Չե՞ վոր չպիտի մոռանալ, վոր վերջին տարիներում մեր արդյունաբերության մեջ հարյուր հազարավոր՝ գեռ պրոլետարական կաթուայում չեփված՝ բանվորներ են ընդունվել։ Աշխատանքային դիսցիպլինի թուլության հետևանքով 1929—30 թվի առաջին կիսում պրոգուները 11 միլիոն մարդար են կազմում, այդ պրոգուների պատճառով մոտավորապես 276 միլիոն ոռոքով պակաս պրոդուկցիա յե ստացվել։

ԴԵՐԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Սրտադրողականության բարձրացման համար մղվող պայքարը պիտի տարվի բանվոր դասակարգի նյութական կացության հետագա բարելավումների համար մղվող պայքարի հետ, և միաժամանակ։

Այստեղից ամենից առաջ և առաջին հերթին ուեալ աշխատավարձի բարձրացման, բանվորական պարենավորման լավացման պրոլետին ե դրված։ Դժբախտաբար մեր կոռպերացիան վատ ե աշխատում, մեր կոռպերատիվային սպառատը բավականաչափ դանդաղաշրժ ե և ալարկութեա, ինչպես իր գեկուցման մեջ ասել ե ընկեր Ստալինը, տվյալ դեպքում դործում ե վոչ իբրև սոցիալիստական սեկտոր, այլ գործում ե վորպես նեպմանական վոգով վարակված ինչ վոր յուրահատուկ սեկտոր։

Արհմիությունները մինչև այժմ իրենց տեսողության գծից դուրս են թողել կոռպերացիայի աշխատանքները — չեն զբաղվել բանվորական պարենավորման հարցերով։ Համագումարը կատեզորիկ դիրեկտիվ ե ավել արհմիություններին։ Մրանից հետո նրանք պիտի կոռպերատիվը հիմնովին կերպով վերակառուցեն։ Անհրաժեշտ ե ընդայնել անմիջապես կոռպերացիայի և տնտեսական մարմինների կողմից բանջարանոցային մեծ տնտեսություններ, կաթնատնտեսական ֆերմաներ, անսամնապահական սովորություններ կազմակերպելու հասարակական աշխատանքները։ Անհրաժեշտ ե լրջորեն մտածել հասարակական սնունդը լավացնելու մասին։

Միանգամայն անբավարար չափերով ե մինչ այժմ ուշադրություն դարձվել աշխատանքի պաշտպանության վրա։ Դրա համար ել այս նպատակով բաց թողնվող միջոցները կամ լիովին չափերով չեն ծախսվում և կամ թե ծախսվում են՝ առանց ցանկալի տպավորությունը թողնելու։ Միայն դրանով կարելի յե բացատրել, վոր դժբախտության դեպքերի տոկոսը բավականաչափ մեծ է։ Այս ասպարիզում դեռ շատ աշխատանք պիտի կատարեն արհմիությունները, աշխատանքի ժողկոմատն ու մեր արդյունաբերությունը։

Վերջին յերեք տարվա ընթացքում բնակարանային շինարարության մեջ մուծվել ե մոտավորապես 2 միլիոնդուրքի, բայց միաժամանակ մեծացել ե և բանվորների քանակը և դրա համար ել յուրաքանչյուր մարդու վրա ընկնող բնակարանային նորման աննշան չափերով ե մեծացել։ Դեռ բոլոր արդյունաբերական ուսունական գործություններին սուր կրիզիս ե զգացվում։ Առաջիկա տարիներն ըստ ամենայնի ուժեղացված բնակարանային շինարարու-

թյան տարիներ են լինելու, Այստեղ վոչ միայն պիտի մեծացնել մուծումների քանակը, այլ և պիտի լավացնել, արագացնել և վորակով բարձրացնել շինարարությունը։ Պակաս կարես խնդիր չե բանվոր դասակարգին կուլտուրական և սոցիալ-կենցաղային հիմնարկություններով — դպրոցներով, ակումբներով, ճաշարաններով և այլն ապահովելու։

Բանվորական պարենավորման լավացումը, աշխատանքի պաշտպանության գործի արագացումը, բանվորական բնակարաններ ստեղծելու համար մղվելիք հետազարայքը — դրանք խնդիրներ են, վորոնք այսոր դրված են մեր առաջ բանվոր դասակարգի նյութական դրությունը բարվոքելու գծով։

ՅԵՏ ՄՆԱՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՄԱՍԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՔԱԲՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԻ ՏԱԿ ԱՌՆԵԼ

XV և XVI-րդ համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում հիմնական արդյունաբերությունը չտեսնված, հակայական հաջողություններ ե ձեռք բերել։ Մենք բավական առաջ ենք շարժել դեպի մեր դրած նպատակը — «հասնել կապիտալիստական յերկրներին և նրանցից ել առաջ անցնել»։

Բոլոր այս հաջողությունները և վոչ մի չափով չպիտի թագյանն մեր՝ արդյունաբերության աշխատանքներում յեղած բացասական կողմերը, ի մի գումարելով մեր նվաճումները, անհրաժեշտ ե միաժամանակ ուշադրություն դարձնել և մեր յետ մնացող աշխատանքներին։

ՊՐՈԴՈՒԿՑԻԱՅԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՄԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԴԱՐՁՆԵՆՔ

Մեր արդյունաբերության ամենայետամեաց աշխատամասը — նրա հատկությունն ե հանդիսանում։ Այն

Արհմիությունները մինչև այժմ իրենց տեսողության գծից գուրս են թողել կոռպերացիայի աշխատանքները — չեն զբաղվել բանվորական պարենավորման հարցերով։ Համագումարը կատեզորիկ դիրեկտիվ ե տվել արհմիություններին։ Մրանից հետո նրանց պիտի կոռպերատիվը հիմովին կերպով վերակառուցեն։ Անհրաժեշտ ե ընդայնել անմիջապես կոռպերացիայի և տնտեսական մարմինների կողմից բանջարանոցային մեծ տնտեսություններ, կաթնատնտեսական ֆերմաներ, անասնապահական սովորություններ կազմակերպելու հասարակական աշխատանքները։ Անհրաժեշտ ե լրջորեն մտածել հասարակական անունով լավացնելու մասին։

Միանգամայն անբավարար չափերով ե մինչ այժմ ուշադրություն դարձվել աշխատանքի պաշտպանության վրա։ Դրա համար ել այս նպատակով բաց թողնվող միջոցները կամ լիովին չափերով չեն ծախսվում և կամ թե ծախսվում են՝ առանց ցանկալի տպավորությունը թողնելու։ Միայն դրանով կարելի յե բացարեկ, վոր դժբախտության դեպքերի տոկոսը բավականաչափ մեծ ե։ Այս ասպարիզում դեռ շատ աշխատանք պիտի կատարեն արհմիությունները, աշխատանքի ժողկոմատն ու մեր արդյունաբերությունը։

Վերջին յերեք տարվա ընթացքում բնակարանային շինարարության մեջ մուծվել ե մոտավորապես 2 միլիոնդուրի, բայց միաժամանակ մեծացել ե և բանվորների քանակը և դրա համար ել յուրաքանչյուր մարդու վրա ընկնող բնակարանային նորման աննշան չափերով ե մեծացել։ Դեռ բոլոր արդյունաբերական ռայոններում բնակարանային սուր կրիզիս ե զգացվում։ Առաջիկա տարիներն ըստ ամենային ուժեղացված բնակարանային շինարարու-

թյան տարիներ են լինելու։ Այստեղ վոչ միայն պիտի մեծացնել մուծումների քանակը, այլ և պիտի լավացնել արագացնել և վորակով բարձրացնել շինարարությունը։ Պակաս կարևոր խնդիր չե բանվոր զասակարգին կուլտուրական և սոցիալ-կենցարային հիմնարկություններով — դպրոցներով, ակումբներով, ճաշարաններով և այլն ապահովելու վականական կառուցանքներով։

Բանվորական պարենավորման լավացումը, աշխատանքի պաշտպանության գործի արագացումը, բանվորական բնակարաններ ստեղծելու համար մզվելիք հետազավայքարը — դրանք խնդիրներ են, վորոնք այսոր դրված են մեր առաջ բանվոր դասակարգի նյութական դրությունը բարվոքելու գծով։

ՅԵՏ ՄԵԱՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՄԱՍԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՔԱՐԵՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԻ ՏԱԿ ԱՌՆԵԼ

XV և XVI-րդ համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում հիմնական արդյունաբերությունը չտեսնված, հակայական հաջողություններ ե ձեռք բերել։ Մենք բավական առաջ ենք շարժվել դեպի մեր դրած նպատակը — «հասնել կապիտալիստական յերկրներին և նրանցից ել առաջ անցնել»։

Բոլոր այս հաջողությունները և վոչ մի չափով չպիտի թագանեն մեր՝ արդյունաբերության աշխատանքներում յեղած բացասական կողմերը։ Ի մի գումարելով մեր նվաճումները, անհրաժեշտ ե միաժամանակ ուշադրություն դարձնել և մեր յետ մնացող աշխատանքներին։

ՊՐՈԴՈՒԿՑԻԱՅԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ՄԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԴԱՐՁՆԵՆՔ

Մեր արդյունաբերության ամենայետամեաց աշխատամասը — նրա հատկությունն ե հանդիսանում։ Այն

ժամանակ, յերբ աշխատանքի բոլոր գծերով մենք անպի-
ճելիորեն և հսկայական չափերով առաջադիմել ենք, այս-
տեղ վոչ միայն չենք առաջադիմել, այլ և ընդհակա-
ռակը, յետաղիմել ենք։ Մենք վորակը փոխանակ բավա-
ցնելու, ընդհակառակը, վատացրել ենք։ Այսպես, մետաղա-
գործության գծով չուզունաձուլության մեջ բռակը 1925—
28 թվի 0,25 տոկոսից 1929—30 թվին մեկ և կես անգամ
մեծացել — 0,38 % ե դարձել, յերկաթաթիթեղի բռակը
0,37 տոկոսից 2,95 տոկոս ե դարձել (ավելացել ե 8 անգամ)։

Ամբողջ սև մետաղագործության գծով 15 ամսվա
ընթացքում (1928—29 թվին և 1929—30 թվի առաջին
յեռամյակում) գանգատներ են յեղել ամբողջ բաց թռղ-
նված պրոդուկցիայի 35 տոկոսի նկատմամբ։ Այսպիսով
մետաղագործարանների ամբողջ պրոդուկցիայի ավելի քան
1/3 մասը չի բավարարում սպառողին։

Իսկ թե ինչ հետեւանքների պատճառ ե դառնում սև
մետաղագործության վատ պրոդուկցիան, — այդ յուրա-
քանչուրն ել զիսեւ։ Վատ մետաղից պատրաստված մեքե-
նաների փշացում, ոելսերի վաղաժամ մաշումն և այլն և այլն
վատ չուզունի հետեւանքը վատ ոելսերը, մեքենաները և
այլ թանգարժեք մետաղյա ապրանքներն են։

Զափազանց վատ դրության մեջ ե քարածխի հատկու-
թյունը։ Առանձին շախտերում մոխրացումը չտեսնված չափե-
րի յե հասնում։ Արտեմեսկու շախտերում նա 35 տոկոսի յե
հասնում։

Խորհրդային ինդուստրիան կոչված ե գյուղական
տնտեսության վերակառուցման հենակը դառնալու։ Տրակ-
տորն ու կոմբայնը իրենց հետ գյուղական տնտեսությանը
հեղափոխություն են բերում։ Բայց վատ տրակտորը, վատ

կոմբայնը միայն ընդունակ են անվանարկելու խորհրդա-
յին արդյունաբերությանը։

Լավ դրության մեջ չե և լայն սպառողական ապրանք-
ների, տեկստիլ արդյունաբերության պրոդուկցիայի վո-
րակը։ Տեկստիլ արդյունաբերության մեջ վորակի վատա-
ցումը վերաբերում ե թելի մանվածքին։ Կաշվեղենի և
կոշկեղենի գծով մի քանի տրեստների (Լենինգրադի) բրակը
30 տոկոսի յե հասնում։ Ինչն ե պրոդուկցիայի վորակի սոս-
կալի դրության պատճառը։ Անշուշտ, գլխավորապես այն,
վոր մեր ձեռնարկություններից շատ շատերը, կովելով
պրոդուկցիայի քանակը բարձրացնելու համար, մոռացու-
թյան են մատնել վորակը, և վոր մեր շատ հիմնարկություն-
ները պատրաստ են վորակը գոհաբերելու քանակին։ Ասելու
կարիք կա արդյոք վոր այդպես վարվելը ճիշտ չե։ Այդ
կարճատես տնտեսավարները մոռանում են, վոր վատ վո-
րակը վատ քանակի յե փոխարկվում։ Ռելևերի վատ
հատկությունը յերկու, յերեմն ել յերեք անգամ կրճատում
են նրանց սպասարկության տեսողությունը։ Դրա համար
ել մեր ժողովրդական տնտեսությունը՝ վատ հատկության
շնորհիվ՝ այդ ոելսերից այնքան եֆֆեկտ ե ստանում, վոր-
քան կարող եր ստանալ, յեթե այդ ոելսերը 2—3 անգամ
պակաս արտադրվեյին։

Նույն բանն ե կատարվում և լայն սպառողական
ապրանքների հետ։ Տեկստիլ ապրանքների կամ կոշկեղենի
վատ հատկությունը պատճառ ե դառնում, վոր սպառողը
կոստյումը մի տարու փոխարեն հագնի վեց տմիս, վոր
կոշկեղենը մի տարու փոխարեն մաշվի վեց ամսվա ըն-
թացքում։ Դա հարվածում ե բանվորների և ծառայողների
աշխատավարձին, գրպանին, և բացի դրանից սաստկացնում
ե ապրանքային սովը։

Ահա թե ինչու XVI համագումարը արդյունաբերա-
կան պրոդուկցիայի դրությունը հատկության տեսակետից
անհանդուրժելի յե ճանաչել:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵԺԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ԶԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՎԵԼ

Ինքնարժեքի իջեցումը այն կարևորագույն աղբյուր-
ներից մեկն ե հանդիսանում, վորոնց հաշվին մենք մեր
առաջնակարգ շինարարությունն ենք կատարում: Որինակ.
այս տարի ինքնարժեքի իջեցումով հիշալ շինարարության
փոնդի մեջ պիտի մտցվի 1,2 միլիարդ ռուբլի: Յուրա-
քանչյուր չստացված միլիոն ռուբլի անմիջականորեն աղ-
բյում ե շինարարության ընթացքի վրա: 1928—29 թվին
արդյունաբերությունն արտադրության ինքնարժեքն իջե-
արժակագուման մեջ՝ գործարակ համաձայնարկած 7 տոկոսի՝ 4,2 տոկո-
սով: 1929—30 թվի առաջին կես տարում հանձնարար-
ված ե յեղել իջեցնել ինքնարժեքը 11,5 տոկոսով, իջեցրել
ե միայն 5,8 տոկոսով: Վորաբեսզի կատարած լինենք
հազարյակի յերկրորդ տարվա, ասել ե թե 1929—30 թվի
համար տրված հանձնարարականը, մենք պետք ե յերկրորդ
համար տարում արտադրությունն եժանացնենք 16,17 տո-
կես տարվա կուտածությունն ետանացնենք շամանակ ե
կոսով: Բայց մինչև տարվա վերջը շատ քիչ ժամանակ ե
մնում և այժմ արդեն կարելի յե ասել, վոր հանձնարա-
րականը չի կատարվելու:

ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ՊԵՏՔ Ե ՀԱՄԱԽՄԲԵԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Առաջին հերթին ինքնարժեքը իջեցնելու վրա պիտի
աղբյուր արտադրության ուսցիոնալիզացիան: Բայց ուսցիո-
նալիզացիայի աշխատանքները պահանջված չափերով չեն

ընդարձակվել: Մեր արտադրության ուսցիոնալիզացիայի ըն-
թացքը յետ ե մնացել ինդուստրիալիզացիայի ընդհանուր
ծավալումից:

Վոր գծով ել վոր արդյունաբերության աշխատանք-
ները վերցնելու լինենք, յուրաքանչյուր մի քայլափոխում
մենք հակայական ուեղերվներ կդանենք, վորոնք հեշտու-
թյամբ կարող են իրացվել: Դրա համար անհրաժեշտ ե
միայն արտադրությունը ուսցիոնալիզացիայի յենթարկել:
Բերենք մի քանի թվեր այս շրջանից: Մենք վառելիքի
դեֆիցիտ ունենք, բայց վորովհետև չենք կարողանում
գործը ուսցիոնալ հիմքերի վրա դնել, վառելիքի ծախսումը
300 միլիոն ռուբլու ավելի յենք կատարում քան հարկա-
վոր ե: Սննդային արդյունաբերության մեջ՝ արտադրու-
թյան վատ հիմնավորման պատճառով՝ ավելի յենք ծախ-
սում 200 միլիոն ռուբլի: Ի՞նչ ե իրենից ներկայացնում
տարան (աբրան): Նա տնտեսության մեջ յերրորդա-
կան նշանակություն ունի, բայց և այնպես տարայի վոչ
ուսցիոնալ գործադրման հետևանքով մենք 50 միլիոն ռուբ-
լուց ավելի յենք կորցնում:

Խորհրդային պետության մեջ յուրաքանչյուր մի
առանձին ցեխի և գործարանի նվաճումները կա-
րող են և պետք ե ամբողջ արդյունաբերության նվաճումները
դառնալ: Փորձերի և արտադրական նվաճումների ամենալայն
փոխանակությունը հնարավոր և կարելիյե մեզ համար:

Արտադրության ուսցիոնալիզացիայի ֆրոնտում մենք
անկասկած շատ ենք յետ մնացել, մինչդեռ մենք կարող
ենք մեծ հաջողություններ ունենալ: Այդ հաջողությունն-
երը մենք պիտի ձեռք բերենք: Դրա համար պետք ե
լիով չափերով և քայլ առ քայլ հետևողականորեն կիրա-
ռենք XVI համագումարի պարզորոշ գիրեկտիվները,

Դրա համար անհրաժեշտ ե ռհատուկ ուշադրություն դարձնել արդյունաբերության գործնական աշխատանքների վրա, անհրաժեշտ ե և պիտի ուշադրություն դարձնել սոցիալիստական ռազմիոնալիզացիայից բղխող հարցերի վրա՝ արտադրության կազմակերպությունը լավացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, հումույթը, վառելիքը և կահավորությունը ռազմիոնալ կերպով ոգտագործելու համար մզկող պայքարի գծով։ Անհրաժեշտ ե և պիտի պայքարել արտադրության մեջ դեպի գործը վատ վերաբերվելու հետևանքով առաջացող կորուստների դեմ։

ՊԵՏՔ Ե ԱՐԱԳԱՑՆԵԼ ՆՈՐ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ.
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԱՇԽԱՏԵՑՆԵԼ ԼՐԻՎ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՄՔ

Ինքնարժեքի եժանացումն զգալիորեն դանդաղում ե շնորհիվ այն հանգամանքի, վոր նոր ձեռնարկությունների բացումը և վերակառուցվող հին ձեռնարկությունների նոր հաճախականությունը և վերակառուցվող հին ձեռնարկությունների չեն կատարել սամանակին չեն կատարել սամանակին զգացման ուղացումը 3—4 ամսով վում, նոր գործարանի բացման ուշացումը 3—4 ամսով սովորական յերեւյթ ե, նոր ձեռնարկության շահագործմանն անցնելը սահմանված ժամկետից մի տարի ուշ — նույնպես բացառություն չի համարվում։ Բայում նաև բաթում նաև բաթատար խողովակը սահմանված ժամկետից մի տարի ուշ ե սկսել աշխատել։ «Բելը Բիչոկ» նոր ապակեգործարանը պիտի սկսեր աշխատել 1930 թվի հունապետին, սակայն սկսել ե աշխատել հունիսին։ Իսկ գործարին, սակայն սկսել ե աշխատել հունիսին։ Իսկ գործարին, բացման ուշացումը վոչ միայն ձեղքվածք ե ծարանի բացման ուշացումը վոչ միայն ձեղքվածք ե առաջացնում ապրանքային հաշվեկշռի մեջ, այլ և նվազեառաջացնում ապրանքային հաշվեկշռի մեջ, այլ և նվազեառաջացնում ե պրոդուկցիայի սահմանված քանակը։ Իսկ այդ ցնում ե պրոդուկցիայի սահմանված քանակը։ Իսկ այդ պակասող քանակը ամենաեժան մասն ե արտադրության,

վորովհետեւ նոր գործարանները բնականորեն ավելի եժան պրոդուկցիա պիտի տան քան հներն են տալիս։ Յուրաքանչյուր մի նոր գործարան անխուսափելիորեն պիտի անցնի յերեխայական հիվանդությունների բովով։ Սրտադրության, ժողովրդական տնտնսության շահերը պահանջում են, վոր այդ հիվանդությունների ժամանակամիջոցը հնարավորության չափ կարձ լինի, Զնայած դրան ներկայումս արտադրությունը կանոնավորելու ժամանակամիջոցը ձգձգվում է ամիսներով և այդ ամիսների ընթացքում ձեռնարկության պրոդուկցիան չափից դուրս թանգ ե լինում։ Առանձնապես վատ ե գործը նոր կահավորումները հին ձեռնարկություններում կանոնավորելու խնդրում։ Շատ համախներմուծված մեքենաները, վորոնց համար մենք վճարել ենք արտասահմանյան վայյուտայով, ամիսներով պահեստատեղիներում ընկած են մնում։ «Ձուղուալյա-ի գործարաններում» Բանվորա-Գյուղացիական Տեսչության տվյալների համաձայն՝ 80 միլիոն ռուբլու ներմուծված կահավորումներից 1929 թվի հոկտեմբերի 1-ին 15,5 միլիոն ռուբլու կահավորամասեր ընկած են յեղել միանգամայն չոգտագործված դրության մեջ և 7,8 միլիոն ռուբլու կահավորամասեր ել միայն կիսով չափ են յեղել պատրաստված արտադրության մեջ ոգտագործելու համար։

Ռուբեժի գործարաննում 12—20 ամսվա ընթացքում ընկած են մնում 500 հազար ռուբլու կահավորումներ։ Մինյարի գործարաննում (Ուլալ) արտասահմանից ստացված կահավորությունը ամբողջ յերեք տարի մնում ե առանց գործադրության։ Հենց այս առթիվ ել XVII համագումարը մատնանշել ե, վոր «Կենտր. Վեր. Հանձ. Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը պիտի ուշադրու-

թյուն դարձնի, վոր արտասահմանում թե յերկրով
ներսում նոր ձեռք բերվող կահավորումը իր
ժամանակին ոգտագործվի և արտադրական
մաքսիմալ եֆֆեկտը տա»:

ՊԵՏՔ Ե ԿԱՌՈՒՑԵԼ ՇՈՒՏ, ԼԱՎ ՅԵՎ ԵԺԱՆ

Մենք միլիարդներ ել ենք մտցնում մեր առաջնա-
կարգ շինարարության մեջ: Բայց և այնպես, չնայած վոր
մեծ հաջողություններ ենք ձեռք բերել, այս ասպարիզում
ևս դեֆեկաններն անպակաս են:

Ամենամեծ դժբախտությունը այն է, վոր մենք շատ
դանդաղ ենք կառուցում: 4—5 տարում կառուցում ենք
այն, ինչ հարկավոր եր և կարելի յեր կառուցել 1—2
տարում: Դեռ տնտեսության մեջ մեր բոլոր աշխատող-
ները չեն գիտակցել շինարարության տեմպերի նշանա-
կությունը: Աշխատել միայն մի սմենայով և միայն
ամառը — սովորական յերեսույթը եւ: Այսպիսի կառուցում-
ները, ինչպիսիները Ստալինգրադի արակտորային գործա-
րանն եւ և Սելմաշստրոյը, վորոնք էլեկտրացել են իսկական
հեղափոխական տեմպեր վերցնել, դեռևս բացառիկ յերե-
վույթներ են: Շինարարության դանդաղկուության շնորհիվ
մենք շատ հարյուր միլիոնավոր ոռութիների, մեզ համար
այնքան շատ կարևոր պլոդուկցիա յենք կորցնում: Այս
խնդրում մենք դեռշատքան պիտի սովորենք կապիտալիս-
տական առաջավոր յերկրներից, առաջին հերթին՝ Հ. Ա. Մ.-
Նահանգներից:

Համագումարը հանձնարարել ե Կենտ. Վերաստ. Հանձ. —
Բանգյուղատեսչությանը ռշարունակել առաջնակարգ շինար-
արության աշխատանքների ընթացքի ստուգումը, հաւաքապես
ուշադրություն դարձնելով ամենախոշոր ոբյեկտների վրա,

վճռականորեն ձգտելով շինարարությունը արագացնելուն
և եժանացնելուն, ինչպես նաև նրա վորակի բարձրացմանը
և արդյունաբերության կողմից կապիտալիստական առա-
ջավոր յերկրների փորձն ողագործելուն»: Համագումարն
արտահայտվել եւ հոգուտ շինարարական աշխատանքները
մաքսիմալ չափերով մեքենայացման յենթարկելուն, հոգուտ
շինարարությունը կլոր տարին կատարելուն և շինարար-
ների մշտական կաղըեր ստեղծելուն:

Չնայած վոր մենք սուր կերպով միջոցների կարիք
ենք զգում, արդյունաբերության առանձին ռայոններ,
տրեստներ և շրջաններ սկսում են այնպիսի ֆարբեկներ
կառուցել, վորոնց կարիքն այժմ այնքան սուր չի զգացվում:
Այսպես, որինակ, Բանգյուղատեսչության աշխատակիցները
հաշվել են, վոր բամբակեղենի արդյունաբերության
մեջ իզուր տեղը ծախսվել ե 150 միլիոն ռուբլի: Անա թե
ինչու կուսակցության համագումարը մատնանշել ե, վոր
անհրաժեշտ ե «պայքարել առաջնակարգ շինարարության
մեջ նկատվող ավելորդությունների դեմ»

Մեր շինարարության ամենամեծ դժբախտությունը
պրոեկտների բացակայությունն է: Մինչև վերջին ժամա-
նակներս պրոեկտները չափից գուրսուշանում եյին: Փաս-
տորեն կառուցումները կատարվում եյին առանց պրոեկտ-
ների: Այս ամենը վոչ միայն ձգձգել, այլ և թանգացըել ե
մեր կառուցումները:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՂՐԵՐԸ

Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի աճման հսկա-
յական տեմպերը բնականաբար մեծ լարվածություն են
առաջացնում ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ:

Պահանջվում ե ճկուն մանյովքներ կատարել բոլոր ռեսուրսներով։ Չուգունի յուրանքաչյուր մի տոննան, ցեմենտի յուրանքաչյուր մի տակառն ել հաշվառքի յեն յենթարկված։ Այսուամենայնիվ մեր տնտեսության մեջ ամենանեղ տեղը կադրերի հարցն ե։ Զեռնարկություններն ու կառուցումները սուր կերպով զգում են բանվորների, ինչեներների և միջին տեխնիկական պերսոնալի կարիքն ու Մարդ, մարդ ե հարկավոր։ այս պահանջը լավում ե Խորհրդային Միության բոլոր ծայրերից և գրեթե բոլոր ձեռնարկություններից։ Շատ հաճախ մեր այս կամ այն ձեռնարկության, մեր այս կամ այն արտադրության տեմպերը հարկադրված ենք լինում արհեստական կերպով դանդաղեցնելու միայն և միայն շնորհիվ այն հանդամանքի, վոր այդ ձեռնարկությունը կամ արտադրությունը հասկացող մարդկանց պահան ե զգացվում։ Դրա համար ել XVII համագումարը իր՝ հատուկ ուշադրությունն ե դարձրել կադրեր պատրաստելու խնդրին։

ԲՈԼՈՐ ՄԻԶՈՑՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Ընթացիկ տարում խորհրդային արդյունաբերությունը 250 հազար բանվոր կլլանե, յեկող տարի նորից 350 հազար բանվոր կպահանջվի։ Ֆաբրիկ-գործարանային և մասսայական աշակերտության դպրոցների ցանցը լավագույն դեպքում կարող կլինի տալ պահանջվող բանվորական քանակի վոչ ավել քան 25—30 տոկոսը։ Այստեղից յերեվում ե, վոր անհրաժեշտ ե բոլոր միջոցներով արագացնել բանվորական կադրեր պատրաստելը։

Զանազան դասընթացքները, կվալիֆիկացիայի բարձրացման և գործազուրկ բանվորների վերակվալիֆիկացիայի

դասընթացքները պիտի մաքսիմալ չափերով ոգտագործել։ Մեր բորսաներում դեռ վորոշ քանակությամբ գործազուրկների կազմեր կան։ Նրանց պետք ե սովորեցնել և վորոշ դեպքերում ել վերհիշել տալ նրանցմոռացածը։ Պիտի արագացնել նաև ջանել բանվորներին պատրաստելը։ Մեծ չափերով պիտի արտադրության մեջ գրավել նաև բանվորուհիներին։ Վերջապես տնայնագործական արդյունաբերության մեջ կան կադրեր, վորոնք վորոշ չափերով պիտի ոգտագործվեն պետական խոշոր արդյունաբերության կողմից։

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸ ՊԵՏՔ Ե ԱՐԱԳԱՑՆԵԼ

1929 — 30 թվին արդյունաբերությունը 84 հազար բարձրագույն կրթությամբ մասնագետների և 113 հազար ել միջակ կրթություն ունեցող մասնագետների պետք ուներ։ Այս պահանջի դիմաց կային միայն 35 հազար բարձրագույն կրթությամբ և 35 հազար միջակ կրթությամբ մասնագետներ։ Ուրիշ խոսքով ինժեներների կարիքը հոգացվել ե միայն 32, իսկ տեխնիկներինը՝ 31 տոկոսով։ Ինժեներների և տեխնիկների պաշտոնների հազիվ մի յերրորդ մասն ե գրավված։ Զնայած դրան՝ ամսե-ամիս աճում ե նոր ձեռնարկությունների թիվը։ Իսկ այս հանգամանքը մեծ պահանջներ ե առաջադրում տեխնիկական դեկավարությանը։ Այսուհետև ավելի մեծ քանակությամբ ինժեներներներ են պահանջվելու ձեռնարկությունների համար։ Բավական չե, վոր քիչ ե աշխատող ինժեներների թիվը, դեռ նրանց շարքերում դեպի բանվոր դասակարգը թշնամաբար տրամադրվածներն ել կան և նրանք բանվոր դասակարգի դեմ կուվելու համար կանգ չեն առնում վատ-

1929 թվի սեպտեմբերի 1-ին կատարված հետազոտությունները պարզել են, վոր տրեստների հիմնական բաժինների վարիչներից 14,4 և ձեռնարկների տեսուչների միայն 8,9 տոկոսն ե, վոր պաշտոնից պաշտոն տեղափոխություններ չեն ունեցել: Մնացածների մոտ մի յերրորդ մասը մինչև այդ իր աշխատանքը փոխել եր մի անգամ: Իսկ յերկու յերրորդ մասը՝ յերկու և ավելի անգամ: Ձեռնարկությունների տեսուչների մոտ 25 տոկոսը յերեք կես տարվա ընթացքում փոխել ե իր պաշտոնը 3—4 5 անգամ:

Վերջին ժամանակներս լայնացրած ու մեծ աշխատանք ե տարվում մեր տնտեսական կաղըերի կվալիֆիկացիան բարձրացնելու համար: Աշխատում են արդյունաբերական չորս և տրանսպորտային մեկ ակադեմիա (*Մոսկվայում, Լենինգրադում, Խարկովում, Բագվում*): Արդյունաբերական ակադեմիաներ պիտի բացվեն նաև Սվերդլովսկում և Վոլգնեսենսկում, կադրային կազմի դասընթացքներ պիտի հիմնվեն Ռոստովում ու Տաշքենտում: Արդյունաբերական հեռակա (զաօհա) ակադեմիան 2600 սովորող ե ընդգրկում, բայց և այնպես տնտեսական կաղըեր պատրաստելու և վերապատրաստելու աշխատանքները դեռ շատ են և պիտի կատարվեն այժմ ու հետագայում:

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Խորհրդային յերկիրը մեծ աշխատանքների յերրորդ տարին ե թեալոխում: Հնդկամյակի առաջին յերկու տարվա պլանը կատարված ե ավելցուկներով: Աջ ուկլոնիստների վայնասունին չունկնդրելով, — վորոնք ճգնում են ապացուցելու, վոր իրը թե վերցված տեմպերը ուեալ չեն և վեր են մեր ուժերից, — կուսակցությունն ու բանվոր գա-

սակարգը հաստատուն քայլերով ընթանում են դեպի հպատակ, դեպի առաջ:

XVI-րդ համագումարը, վոր հաշվի յե առել հնգամյա պլանի առաջին յերկու տարվա ընթացքում կատարված մասի հետեւանքները, մեր յերկրում ձեռք բեր ված հսկայական հաջողություններն ե ընդգծել: Համագումարն ընդունել ե, վոր ԽՍՀ Միությունը չտեսնված արագույամբ փոխարկվում ե յետամնաց, ազրարային յերկրից նաջավոր, խոշոր ինդուստրիա ունեցող յերկրի:

Կատարելապես գնահատելով այն, ինչ արվել ե այս ժամանակամիջոցում, համագումարը միննույն ժամանակ մոտիկ ապագայի համար աշխատանքների ընդլայնված ծրագիր ե տվել, — յերկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի համար մղվող պայքարի ընդլայնված ծրագիր, վոր գործադրվելու յե մոտ ապագայում:

17 Միլիոն տոնն 2014-ին չնգաՄՅԱԿԻ ՎԵՐՁՈՒՄ:
ՊԱՅՔԱՐ ԽՈՐՀՐԴՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԿԵՐՊ:

ԽՈՐՀՐԴՅԱՅԻՆ ՅԵՐԿՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:



ՎԱՐԵԼԵՐԱՅԻՆ ԴԵՖԻՑԻՏԻ ԿԱՏԱՐՅԱԼ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ:
ԱՐԵՎԵԼԵՐՈՒՄ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՐԱԾԽԱՄԵՏԱՂԱՅՈՒՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԵԼԸ:

ԱՐԵՎԵԼԵՅԱՆ ՌԱՅՈՆՆԵՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՆ:
ԹԵԹԵՎ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ ԱՐԱԳԱՅՈՒՄԸ:
ՈԵԱՀ ԱԶԽԱՏԱՎԱՐՀԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՅԵՎԱՐԵԼ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

	Եջ
Խորհրդային արդյունաբերության վերականգնողական շրջանը	3
Ասածնակարգ շինարարության տեմպերը	7
Սրբունաբերության զարգացումը Արևելքում	17
Հնգամյակից անցնում ենք. ագրարային յերկրից դառնում ենք ինդուստրիալ յերկրի	25
Վոչ թե վարեջքի «հանգչող», այլ վերելքի հաստատուն ուղիով ենք ընթանում	27
Հանում ենք կապիտալիստական յերկրներին	28
Մե մետաղագործությունն ու ելեկտրոարտադրությունը ին- գուստրիալիզացիայի բազան են	30
Չպետք ե ներմուծենք, այլ ինքներս պիտի մեքենաներ արտադրենք	35
Արդյունաբերությունը գյուղական տնտեսության սոցիալիս- տական վերակառուցման բանալին ե	39
Թեթև ինդուստրիայի հնգամյա պլանը կատարել	45
Ապահովենք կուլտուրական հեղափոխության հաղթանակը .	49
Չպետք ե հավասարվել նեղ տեղերին, այլ պիտի ուղղել այդպիսիները	50
Պրոլետարիատի սոցիալ - տնտեսական նվաճումները, գործա- զրկության նվազումն ու բանվոր դասակարգի քանակի մեծացումը	54
Բանվորական որվա կարճացումն ու նյութական գրության բարելավումն	56
Արտադրության մեջ բանվորների մասնակցության նոր ձևերը	58
Աշխատանքի արտադրողականությունը յետ և մնում պլանից .	69
Դեպի հաղթանակներ	61
Յետ մնացող աշխատանքամասերը պետք ե պրոլետարական ինքնաշխատության կրակի տակ առնել	63
Պրոդրկցիայի հատկությունը պետք ե մեր ուշադրության կենտրոնը դարձնենք	63

Երտադրությունն եժանացնելու հանձնարարականը չի կեն- սագործվել	66
Մասաներին պետք ե համախմբել արդյունաբերության ռացիոնալիզացիայի շուրջը	66
Պետք ե արագացնել նոր ձեռնարկությունների բացումը. գործարանները աշխատեցնել լրիվ բեռնվածությամբ .	68
Պետք ե կառուցել շուտ, լավ և եժան	70
Սոցիալիստական արդյունաբերության կազմերը	71
Բոլոր միջոցներով պատրաստել բանվորներին	72
Ինձներական - տեխնիկական պերսոնալի պատրաստման գործը պետք ե արագացնել	73
Տնտեսավարը պարտավոր ե տիրապետել արագործության տեխնիկային	75
Ամփոփումն	76



ՆՈՐ ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

Տ Ա Ն Դ Ի Տ

ԾԱՎԱԼՎԱԾ ՖՐՈՆՏՈՎ

(ԽՆՁ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ)

Գինը 20 կող.

Ն. Ե Լ Ի Զ Ա Ր Ո Վ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԿՈԼԵՈԶԱՅԻՆ ՀԱՐԺՄԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱ

ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

Գինը 20 կող.

Ա. Խ Ա Վ Ի Ն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՀՆԳԱՄՅԱԿԻ Յ-ՐԴ ՏԱՐՎԱ ՇԵՄ ՔԻՆ

Գինը 20 կող.

Բ Ո Յ Ա Ր Ս Կ Ի Ց

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Գինը 20 կող.

Ս Ո Բ Ո Լ Ե Վ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՍՊԱՌ-ՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գինը 10 կող.

ՀՀ Ազգային գրադարան



NL0193456

31.977

20 чпм.



А. ХАВИН
На грани 3-го года
пятилетки
(Что решил XVI съезд ВКП(б)
о промышленности).
Перевод с русского

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С.
Москва, центр, Никольская, 10.